

**ԱՌԱՋԻՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆԸ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ**



ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Արդարևարգ իրավիճակներում նյութական և ոչ նյութական ժառանգության պահպանման համակարգված պատրաստվածության և հասցեական արձագանքման համար

ԱՊԱՐՆԱ ԹԱՆԴՈՆ

ՀՏԴ 008:719(076)
ԳՄԴ 71+79.0g7
Թ 220

Թանդոն Ապարնա

Թ 220 Առաջին օգնություն մշակութային ժառագայթանը
ճգնաժամային իրավիճակներում: Գործնական ուղեցույց
/ Ապարնա Թանդոն.- Եր.: «Մագաղաթ պլուս» հրատ.,
2024. – 108 էջ:

ՀՏԴ 008:719(076)
ԳՄԴ 71+79.0g7

ISBN 978-9939-895-43-7

© ICCROM, Prince Clause
Fund for Culture and Deve-
lopment, Cultural Emergency
Response, ICOM Armenia,
Association of Museum
Workers and Friends, 2024.
© Ապարնա, Թ., 2024

Հրատարակվել է 2024 թվականին Մշակութային արժեքների պահպանության և վերականգնման ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի (ICCR0M), Via di San Michele 13, 00153 Rome, Italy (Հռոմ, Իտալիա)

Արքայազն Կլաուսի անվան մշակույթի և զարգացման հիմնադրամի, Kingsfordweg 151, 1043 GR, Amsterdam, The Netherlands

Մշակույթի ոլորտում արտակարգ իրավիճակների արձագանքման կազմակերպության, Herengracht 474, 1017 CA Amsterdam, The Netherlands (Ամստերդամ, Նիդերլանդներ)

ԻԿՕՄ-ի հայկական թանգարանների ազգային կոմիտեի և Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիայի (ԹԱԲԱ) կողմից

ՀԱՄԱՎԵՐԻՆԱԿՈՒԹՅԱՄ

Հիմնական հեղինակ և խմբագիր

Ապարնա Թանդոն

ՀԱՏՈՒԿ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՎԵՐԻՆԱԿՆԵՐ

Պատահարից հետո վնասի և դիսկերի գնահատում

Ռուհիտ Ջիգյասու, Էժենի Կրետե, Էլկե Աեթլեր

Անվտանգություն և կայունացում

Էժենի Կրետե, Էլկե Աեթլեր, Շավիր Ռոման, Էսմերալդա Պուպերյո

Գործնական օրինակներ

Մարիա Մեսիլիա Ռոդրիգեզ Մորենո, Էժենի Կրետե, Իհոր Պոշիվայլո, Կյաո Միյո Կո, Էլկե Ջեթլեր, Վալենտինա Սպանո, Լայլա Սալիի

Գիտական ակնարկ

Ջեսիկա Դոյլ, Ջոնաթան Իթոն, Սոնյա Ջովինացի

Հետազոտություն

Ջեսիկա Դոյլ, Ջոնաթան Իթոն, Սոնյա Ջովինացի

Տվյալների ձևավորում

Քրիստոֆեր Մալպիիթան

ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

ICCR0M

Քեթրին Անտոնարկի, Ապարնա Թանդոն, Ջենիֆեր Քոփիթոն, Իզաբել դը Բրիզի և Իզաբել Վերգեր

Արքայազն Կլաուսի մշակույթի և զարգացման հիմնադրամ

Դերորա Սթյուք

ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻԿՕՄ-ի հայկական թանգարանների ազգային կոմիտե

Հայկ Մկրտչյան (նախագծի ղեկավար)

Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիա

Ավարդ Գրիգորյան

Թարգմանություն

Սյուզաննա Սարգսյան

Մասնագիտական խմբագրում/ սրբագրում

Նժդեհ Երանյան, Հռիփսիմե Պիկիչյան, Ավարդ Գրիգորյան

Գրական խմբագրում/սրբագրում

Սևակ Ղազարյան



Սույն հրատարակումը գտնվում է հանրային տիրույթում Attribution-NonCommercial-ShareAlike 4.0 (CC BY-NC-SA 4.0) միջազգային արտոնագրի (<https://creativecommons.org/licenses/by-nc-sa/4.0/>) պայմաններով: Օգտագործելով սույն հրատարակության բովանդակությունը՝ օգտատերերն ընդունում են իրենց պարտավորվածությունը ICCR0M-ի Բաց հասանելիության շտեմարանի ցանկացած նյութերի հետագա օգտագործման պայմաններով:

Բնօրինակի վերնագիրը՝ First Aid to Cultural Heritage on Times of Crisis: 1. Handbook and 2. Toolkit [IN ENGLISH]: Հրատարակվել է 2018 թվականին Մշակութային արժեքների պահպանության և վերականգնման ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի (ICCR0M) և Արքայազն Կլաուսի անվան մշակույթի և զարգացման հիմնադրամի կողմից: Բնօրինակ տարբերակ. ©ICCR0M, Արքայազն Կլաուսի անվան մշակույթի և զարգացման հիմնադրամ:

Այս հրատարակության մեջ նշված անվանումները և ներկայացված նյութերը չեն ենթադրում որևէ կարծիքի արտահայտում ICCR0M-ի, Արքայազն Կլաուսի անվան մշակույթի և զարգացման հիմնադրամի և Մշակույթի ոլորտում արտակարգ իրավիճակների արձագանքման կազմակերպության կողմից՝ կապված որևէ երկրի, տարածքի, քաղաքի կամ տեղանքի իրավական կարգավիճակի, ինչպես նաև այդ երկրի իշխանությունների կամ դրա սահմանների սահմանազատման հետ: ICCR0M-ը, Արքայազն Կլաուսի անվան մշակույթի և զարգացման հիմնադրամը և Մշակույթի ոլորտում արտակարգ իրավիճակների արձագանքման կազմակերպությունը չեն երաշխավորում այս հրատարակությունում տեղ գտած տվյալների ճշգրտությունը և դրանց կիրառումից առաջացած հետևանքների համար որևէ պատասխանատվություն չեն կրում:

Հրատարակության մեջ արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին, սակայն պարտադիր չէ, որ դրանք արտահայտեն ICCR0M-ի, Արքայազն Կլաուսի անվան մշակույթի և զարգացման հիմնադրամի և Մշակույթի ոլորտում արտակարգ իրավիճակների արձագանքման կազմակերպությունների քաղաքականությունը կամ տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գործնական ուղեցույց 5



Պատահարի վայրում վնասի և ռիսկերի գնահատում

- Ստուգաթերթեր 8
- Տարածքի հատակագծի և բազային քարտեզի կազմում 11
- Գնահատման արդյունավետ ձևաթղթի առանձնահատկությունները 14
- Աղետից հետո վնասի և ռիսկերի գնահատման ձևանմուշներ 15
- Վնասի վերաբերյալ տվյալների հավաքման խորհուրդներ 26
- Շենքերին և շինություններին հասցված կոնստրուկտիվ վնասի տեսակները 28



Անվտանգություն և վիճակի կայունացում

- Կորդինատների միջոցով տեղակայման վայրի քարտեզագրում 41
- Տեղակայման ծածկագրերի ստեղծում 43
- Եզակի նույնականացման համարների հատկացում 44
- Տարհանման փաստաթղթավորում 46
- Փրկարարական գործողության փաստաթղթավորում 48
- Իննամքի վերաբերյալ խորհուրդներ 50
- Փաթեթավորման վերաբերյալ խորհուրդներ 51
- Օրգանական և անօրգանական նյութեր 55
- Դասակարգում և առաջնահերթությունների սահմանում 57
- Շարժական մշակութային ժառանգության վիճակի կայունացում 59

- Տարհանման և փրկարարական գործողությունների համար անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ 69
- Ժամանակավոր ապաստան 75
- Պարզ հենարանների կառուցում 81
- Խոնավ շինությունները չորացնելու վերաբերյալ խորհուրդներ 94
- Նյութեր և սարքավորումներ՝ կառույցների և շենքերի վիճակի շտապ կայունացման համար..... 95

Հղումներ 99

Գործնական ուղեցույց

Ստորև ներկայացված են խորհուրդներ, որոնք կօգնեն կողմնորոշվել գործնական ուղեցույցից օգտվելիս:

ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՆԵՐԴԻՐՆԵՐ

Յուրաքանչյուր էջի վերևի աջ անկյունում կգտնեք ինտերակտիվ ներդիրներ, որոնք կօգնեն անցնել գործնական ուղեցույցի ձեզ անհրաժեշտ բաժինը:

ՀՂՈՒՄՆԵՐ

Սրանք **կապույտ գույնով և թավ** ընդգծված հղումներ են, որոնք թույլ են տալիս անցնել փաստաթղթի կոնկրետ բաժիններ:



ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ. փորձի վրա հիմնված խորհուրդներ:




ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ուշադիր եղեք՝ չնախատեսված սպառնալիքներից կամ սխալներից խուսափելու համար:



ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ. շարունակել կարդալ



ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՑՈՒՑԱԲԵՐՎՈՂ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԽԵՄԱ



ՊԱՏԱՀԱՐԻ ՎԱՅՐՈՒՄ ՎՆԱՍԻ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ



Վնասի և ռիսկերի տեղում գնահատման ստուգաթերթ

Տուժած տարածքում (տարածքներում) գնահատում իրականացնելիս՝ առաջնային նշանակություն ունի անձնական անվտանգության ապահովումը: Նախքան տարածք մուտք գործելը՝ հետևեք ստորև նշված խորհուրդներին:

- ✓ Համոզվեք, որ ունեք տարածք մուտք գործելու համար անհրաժեշտ թույլտվություն:
- ✓ Համոզվեք, որ ունեք առնվազն մեկ հաղորդակցման միջոց, օրինակ՝ բջջային հեռախոս կամ բարձր հաճախականության ռադիոհաղորդիչ:
- ✓ Հիշեք տեղական ոստիկանության բաժանմունքի, ոստիկանության հերթապահ մասի, հրշեջ կայանների, շտապ օգնության ծառայությունների հեռախոսահամարները՝ արտակարգ իրավիճակների համար:
- ✓ Խուսափեք վտանգավոր իրավիճակներից և հիշեք, որ տարերային աղետի հետևանքները պարունակում են լրացուցիչ ռիսկեր, օրինակ՝ ցնցումներ, սողանքներ, կողոպուտ և այլն:
- ✓ Եղեք տեղեկացված շրջապատող միջավայրի մասին և գտեք մոտակա անվտանգ գոտին:
- ✓ Պահպանեք հանգստություն և հետևեք, թե ուր եք գնում:
- ✗ Առանց համապատասխան պաշտպանիչ հանդերձանքի՝ տարածք մուտք մի գործեք:
- ✗ Մի շրջեք տարածքում մենակ կամ առանց երթուղին պլանավորելու:
- ✗ Ճանապարհների վիճակը կարող է շատ վատ լինել, իսկ հասանելիությունը՝ խիստ սահմանափակ: Հստակ պլանավորեք ուղևորությունը և խուսափեք մուգ ժամերին մեքենա վարելուց:

Նախքան տեղ հասնելը՝ համոզվեք, որ տեղում վնասի և ռիսկերի գնահատումը սկսելու համար ունեք հետևյալ սարքավորումներն ու պարագաները.



- Անհատական պաշտպանության միջոցներ (տե՛ս ամբողջական ցանկը հաջորդ էջում)
- Վնասի և ռիսկերի գնահատման ձևաթղթեր
- Տեսախցիկ, սմարթֆոն կամ պլանշետ՝ թույլտվության առկայության դեպքում լուսանկարներ անելու և աշխարհագրական կորդինատները գրանցելու համար: Այն դեպքում, երբ տարածքում ՚հ տեսախցիկը, ՚հ էլ բջջային հեռախոսը թույլատրված չեն, էսքիզներ և նշումներ կատարելու համար պետք է ձեռքի տակ համապատասխան նոթատետր ունենալ:
- Լապտեր /գրպանի լապտերիկ՝ պահեստային մարտկոցներով
- Չափիչ ժապավեն, հեռաչափ ձողեր և տեսաչափական մանրադիտակ (հնարավորության դեպքում)
- Կողմնացույց. կարող եք նաև բջջային հեռախոսով կողմնացույցի հավելված ներբեռնել
- Ճեղքվածքի լայնության հաշվիչ
- Լազերային հեռաչափ
- Ֆոտո սանդղակներով տեղեկատվական քարտեր
- Թղթի սեղմակներ
- Մաքուր և վանդակավոր թղթեր
- Կապարե և գունավոր մատիտներ՝ քարտեզների վրա առարկաները նշելու համար: Խուսափեք գրիչներից, քանի որ թանաքը կլուծվի, եթե ձևաթղթերը թրջվեն՝ հանգեցնելով կարևոր տեղեկատվության կորստի:
- Ռետիներ, մատիտի սրիչներ և քանոններ
- Հաշվիչ (հնարավորության դեպքում)
- Ազդանշանային/նախազգուշական ժապավեն, պարաններ և ցուցանակներ
- Շշալցված ջուր և սնունդ
- Արտակարգ իրավիճակների դեպքում պատասխանատու հիմնական մարմինների հեռախոսահամարների ցանկ, ինչպիսին են անվտանգության ծառայությունը, հրշեջ ծառայությունը, շտապ օգնությունը և այլն:



BC Housing. 2018. *Rapid Damage Assessment*. Burnaby, BC Housing.

Ցանկը հասանելի է հետևյալ հղումով՝
<https://perma.cc/686P-5JFE>

Անհատական պաշտպանության միջոցների ստուգաթերթ

Կախված արտակարգ իրավիճակի տեսակից և այն վայրից, որտեղ փաստաթղթավորում եք իրականացնում, թիմի բոլոր անդամների անձնական անվտանգությունն ապահովելու համար, նախքան տեղ հասնելը, անհրաժեշտ է ձեռք բերել հետևյալ սարքավորումները.

- Սաղավարտ
- Վառ գույնի բաճկոն կամ ժիլետ
- Տաքատ ու երկարաթև վերնաշապիկ
- Փակ կոշիկներ
- Լապտեր՝ պահեստային մարտկոցներով
- Սուլիչ
- Հակափոշային դիմակներ՝ փականներով
- Արդյունաբերական պաշտպանիչ ձեռնոցներ
- Պաշտպանիչ ակնոց
- Առաջին օգնության արկղիկ
- Միջատների դեմ պայքարի միջոցներ (առկայության դեպքում)
- Ձեռքերի ախտահանման միջոցներ (առկայության դեպքում)



Կոնեկտիկուտի համալսարանի տեխնոլոգիաների տրանսֆերի կենտրոն. 2010. Պաշտպանիչ միջոցներ ջրիեղելների հետևանքների վերացմամբ զբաղվող մասնագետների համար: Կոնեկտիկուտ, Ճարտարագիտության դպրոց, Կոնեկտիկուտի համալսարան:

Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://perma.cc/LG2T-FTDZ>

Մշակութային ժառանգության հավաքածուների խորհուրդ. 1998. *reCollections: Մշակութային ժառանգության հավաքածուների պահպանությունն Ավստրալիայում. մարդկային ռեսուրսների կառավարում: Կանթերա*, Մշակութային ժառանգության հավաքածուների խորհուրդ:

Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://perma.cc/RR45-BJDWW>

Ինչպես կազմել տարածքի հատակագիծը



Տարածքի և հարկի հատակագծերն օգտակար են վնասը գնահատելու և փաստաթղթավորելու տեսանկյունից: Եթե դրանք ձեռքի տակ չկան, կարող եք ինքնուրույն գծել տարածքի հատակագիծը՝ հետևելով ստորև նշված քայլերին:

- 1 Շրջեք տուժած տարածքում**, որպեսզի կարողանաք որոշել դրա չափերը, համաչափության առանցքը և ընդհանուր տեսքը՝ գծագրի մասշտաբն ընտրելու համար: Գծագրի մասշտաբը որոշելիս պետք է հաշվի առնել նաև քարտեզի վրա տարածքի հարևանությամբ գտնվող տարրերը ներառելու հնարավորությունը, օրինակ՝ համապատասխան ուղեհիշները, ռիսկային գոտիները և այլն:
- 2 Ընտրեք մեկնարկային կետը** (օրինակ՝ շինության անկյունը) և նշեք այն վանդակավոր թղթի վրա:
- 3 Այժմ կարող եք սկսել** տեղաշարժվել շենքում և պատ առ պատ նկարել հատակագիծը. այն կազմելիս պարտադիր չէ խիստ ճշգրիտ լինել, հատկապես որ գնահատման այս փուլում պետք չէ շատ մոտենալ վնասված շինությանը: Եթե չունեք չափման գործիքներ, ապա քայլի երկարությունը կարող է օգտագործվել որպես չափման մոտավոր միավոր. մեկ քայլի երկարությունը մոտավորապես մեկ մետր է:
- 4 Քարտեզի վրա նշեք** ընտրված մասշտաբը և **կողմնորոշիչ ուղղությունը** (օրինակ՝ հյուսիս կամ հարավ):
- 5 Նշեք շենք կամ տարածք մուտք գործելու** ճանապարհները և հիմնական մուտքերը: Նշեք նույնականացված **անվտանգության գոտիները** (առկայության դեպքում), որոնք հետագայում կարող են օգտագործվել արտակարգ իրավիճակների դեպքում, ինչպես նաև որպես պահեստ կամ տարհանման համար նախատեսված մեքենան կայանելու համար:
- 6 Մի մոռացեք նշել շրջապատում գտնվող այլ առարկաները**, որոնք փլուզվելիս կարող են վտանգ ներկայացնել շենքի համար:
- 7 Առանձնապես մեծ մասշտաբների աղետների դեպքում ներգրավեք** այն մարդկանց, ովքեր աշխատում կամ ապրում են մոտակայքում: Նրանք կարող են օգնել ձեզ կողմնորոշվելու, եթե մնացած բոլոր ուղեհիշներն անհասանելի են:



Տարածքի հատակագծի վրայի նշումներն ու գրառումները պետք է լինեն հստակ և ընթեռնելի:


1-A

ՎԻՃԻԿԱԿԱՆԱՅՈՒՄԱՆ ԿԻՆՈՒՄԱՆ ԿՈՆՍՏՐԱԿՏԻ ՎԵՐԱԿԱՆԱՅՈՒՄԻ ԴՆԱԿ

ՔԱՆԱԿԱՆԱՅՈՒՄՆԻ ՊԱՆՍԻ ՌԻՍԿԻ ՌԻՍԿԻ ՎԱՐՄԱՆԱՍԻՐՆԵՐ ԴՆԱԿԱՎԱԿՈՐԻՄԵՆՏ, ՈՒՂՈՍԱՅՈՒՄԻ ՎՊԱՆՍԻ

DATE: 27.04.09
DRAWN BY: GABRIELIAN, H. HENRIK
CHECKED BY: KOHRT, S. PAVLOV

- LEGEND**
- STAFF PARKING
 - VISITOR PARKING
 - GOVT. ARCHIVES/MUSEUM
 - CITY PALACE MUSEUM
 - MARKET
 - FATMI RAUKHGH
 - RESTAURANT MEALS
 - SHU NUMANS
 - SECURITY CHECK
 - SECURITY GUARD



Քաղաքային պալատի փորձքի քարտեզի նմուշ, Ուդայպուր, Հնդկաստան, 2009 թ.
Լուսանկարը՝ Ռոհիտ Զիզյասու

Ինչպես կազմել բազային քարտեզ

Բազային քարտեզն անհրաժեշտ է այն դեպքերում, երբ նույն տեղանքում բազմաթիվ տարածքներ են տուժել: Եթե տուժած տարածքի բազային քարտեզը բացակայում է, այն կարելի է արագ պատրաստել՝ օգտագործելով արբանյակային լուսանկարը, որը ցույց է տալիս տարածքը/քաղաքը/տարածաշրջանը՝ կախված իրադարձության մասշտաբից և բնույթից:

Բազային քարտեզը պետք է ցույց տա հյուսիսը, համապատասխան կառույցները, հասանելի ավտոճանապարհները և արահետները, ինչպես նաև իրավասության սահմանները:

Եթե աղետը կամ ճգնաժամը մեծ տարածք են ընդգրկում և ազդում են ողջ տարածաշրջանի կամ քաղաքի վրա, ապա անհրաժեշտ է ստեղծել համապատասխան մասշտաբի քարտեզ, որտեղ նշվում են տուժած մշակութային ժառանգության գտնվելու բոլոր վայրերը: Յուրաքանչյուր տարածք պետք է ունենա իր եզակի նույնականացման համարը, որը հետագայում կօգտագործվի վնասի արագ գնահատում իրականացնելու համար:



Վնասի և ռիսկերի հետպատահարային գնահատման արդյունավետ ձևաթղթի կարևորագույն առանձնահատկությունները

- 1 **Հակիրճ** և հեշտ է լրացվում:
- 2 Հարմարեցված է **տեղական** պայմաններին և **լեզվին**:
- 3 **Համապատասխանեցված** և հարմարեցված է տուժած տարածքում շարժական, անշարժ և ոչ նյութական մշակութային ժառանգությանը:

Թիմի հետ քննարկեք վնասի և ռիսկի յուրաքանչյուր կատեգորիայի սահմանումը, որպեսզի թիմի անդամների կողմից գրանցվող տվյալները չհակասեն իրար: Սա հատկապես կարևոր է առավել մեծ թիմերի պարագայում, երբ տվյալների գրանցումը կատարվում է բազմաթիվ խմբերի կողմից:

Թեև ձևաթղթերը կարող են մշակված լինել որոշակի աղետի և մշակութային ժառանգության գնահատման համար, դրանք պետք է օգնեն իրականացնել վնասի և ռիսկի համապարփակ գնահատում: Օրինակ՝ եթե հիմնական վտանգը երկրաշարժն է, ապա պետք է հաշվի առնել նաև ուղեկցող վտանգները, ինչպիսին են հրդեհը և ուժեղ տեղումները (առկայության դեպքում):

Ներառել բազմակի ընտրության տարբերակներ և, անհրաժեշտության դեպքում, ավելացնել որակական տվյալներ: Անհրաժեշտության դեպքում տեղեկատվություն հավաքել տարբեր մակարդակներում, որոնք կարող են նաև ենթախմբերի բաժանվել, մասնավորապես.

- 1 Մարզ/քաղաք/շրջան
- 2 Տարածք
- 3 Շինություն
- 4 Հավաքածու/ առարկաներ



Անշարժ և շարժական մշակութային ժառանգության վնասների և ռիսկերի տեղում գնահատում և գրանցում



Ձևաթուղթ 1

Ստորև ներկայացված ձևաթուղթը սահմանում է տեղեկության մակարդակները և հնարավոր դաշտերը, որոնք կարող են հաշվի առնվել շարժական և անշարժ մշակութային ժառանգության վնասի և ռիսկի տեղում գնահատման առանձին կամ համապարփակ ձևաթղթեր մշակելիս:

Ժամանակ խնայելու համար թվարկված տեղեկատվության դաշտերից մի քանիսը, ինչպիսին են անունը, արժեքը կամ սեփականությունը, կարող են լրացվել հետագայում:

Անհրաժեշտ կլինի հարմարեցնել ստացված տեղեկությունը՝ տվյալ տարածքին բնորոշ մշակութային ժառանգության առարկաներին ու տեխնոլոգիաները ներառելու համար:

Քանի որ բոլոր պատահարներն էլ տարբեր են, հետևաբար այս ձևաթուղթը և դրանում պարունակող տեղեկատվությունը կամ լրացվող դաշտերը կարող են ըստ անհրաժեշտության տեղայնացվել: Օրինակ՝ եթե տվյալ իրավիճակում վնասվել են մշակութային ժառանգության մաս կազմող շենքեր, սակայն այնտեղ գտնվող իրերը մնացել են անվնաս, կարող եք այս ձևաթուղթն օգտագործել մշակութային ժառանգության շենքերի գնահատման ձև կազմելու համար և ներառել միայն տեղեկատվության ամենակարևոր մակարդակներն ու դաշտերը:

Եթե որոշել եք պատրաստել վնասների և ռիսկերի գնահատման համապարփակ ձևեր, համոզվեք, որ նման ձևաթղթերն օգտագործվելու են բանապարտֆիլային թիմերի կողմից, որոնք նախնական վերապատրաստում են անցել ինչպես անշարժ, այնպես էլ շարժական մշակութային ժառանգության վնասները և ռիսկերը տարբերելու վերաբերյալ:

- 1 Գնահատման ամսաթիվը (ամսաթվերը)
- 2 Գնահատող(ներ)ի անունը(ները)
- 3 Գնահատող(ներ)ի կոնտակտային տվյալները
- 4 Գնահատող(ներ)ի մասնագիտությունը (անհրաժեշտության դեպքում)

Մակարդակ 1. Մարզ/քաղաք/տարածք (արդիական է տարածաշրջանի մասշտաբով տեղի ունեցած աղետի դեպքում)

- 1 Քաղաքի/շրջանի անունը և աշխարհագրական կորդինատները
- 2 Դեպքի նկարագրությունը
- 3 Աղետի բնույթը (բնական կամ տեխնածին)
Բնական աղետներ՝ երկրաշարժ, փոթորիկ, մրրկահողմ, ջրհեղեղ, հրդեհ և այլն:

Տեխնածին բնույթի վտանգներ՝ վանդալիզմ, հրկիզում, միջուկային ճառագայթում, պատերազմ/ռազմական գործողություններ և այլն:

Մակարդակ 2. Տարածք (հատկապես կարևոր է, եթե տուժած տարածքում կան հնագիտական և մշակութային ժառանգության այլ տեսակներ՝ տարբեր նյութական և ոչ նյութական տարրերով)

- 1 Տարածքի անվանումը:
- 2 Գտնվելու վայրը՝ կորդինատներով:
- 3 Անհրաժեշտության դեպքում, գնահատման ձևից բացի, օգտագործեք տարածքի հիմնական քարտեզը, որը ցույց է տալիս մշակութային առարկաների գտնվելու վայրը:
- 4 Պաշտպանության մակարդակը (օրինակ՝ միջազգային, պետական, համայնքային կամ անպաշտպան):
- 5 Վնասի աստիճանը (օրինակ՝ թեթև, միջին կամ ծանր)՝ տարածքի մակարդակով: Որտեղ է վնասված տարածքը տեղակայված:
- 6 Արդյո՞ք մաքրման ենթակա տարածքում կան արտաքին բեկորներ և թունավոր թափոններ:
- 7 Արդյո՞ք տարածքում կան անվտանգ և ազատ աշխատանքային գոտիներ՝ անվտանգության և կայունացման գործողություններ իրականացնելու համար: Նշեք դրանց գտնվելու վայրը տարածքի քարտեզի վրա: Նաև նշեք, թե արդյո՞ք տարածքում կամ դրա մոտակայքում կա կայանատեղի՝ միջին և ծանր բեռնատարողության մեքենաների կայանման համար:
- 8 Գրանցեք կորուստները:

Հնարավորության դեպքում և տվյալների առկայության պարագայում գրանցեք եկամտի, մարդկային ռեսուրսների և (կամ) ենթակառուցվածքների կրած կորուստները: Այստեղ հարկավոր է հաշվի առնել որոշ դրույթներ.

- Անձնակազմի թիվը պատահարից առաջ և հետո:
- Պատահարի ուղղակի ազդեցության հետևանքով տուժած գործունեությունը, որը իրականացնում են հուշանվերների վաճառքով զբաղվող ընկերությունները, արհեստագործական ոլորտը, զբոսաշրջության/հյուրընկալության ոլորտի կազմակերպությունները:
- Պատահարից առաջ և հետո այցելուների միջին թիվը:

Մակարդակ 3: Շենք

Հուշում. ստորև ներկայացված հարցերը և առաջարկությունները նախատեսված են տեղում մեկ շենքի գնահատում իրականացնելու համար:

- 1 ա) Շենքի անունը
բ) Շենքի համարը (առկայության դեպքում)
գ) Եթե շենքը համար չունի, անհրաժեշտ է այն պայմանական համարով նշել:
- 2 Շենքի սեփականության իրավական կարգավիճակը (պետական, մասնավոր, անհայտ):
- 3 Շենքի օգտագործման նշանակությունը՝ առևտրային, կրոնական կամ պետական (հուշահամալիր, գրադարան, թանգարան, դպրոց և այլն):
- 4 Ինչպիսին է գործունեության շարունակականության մակարդակը. չի խաթարվել/ամբողջովին խաթարվել է/խաթարվել է որոշակի տարածքում, բայց շարունակվում է այլուր:
- 5 Բացի ձևաթղթից՝ արդյո՞ք ունեք տեղանքի քարտեզ, նախքան պատահարն արված լուսանկարներ, շենքի գծագրեր և էսքիզներ:
- 6 Շենքի պաշտպանության մակարդակը. (միջազգային, պետական, համայնքային, անպաշտպան):
- 7 Շենքի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ.
ա) Գոյություն ունեն շենքի վերաբերյալ ավելի վաղ կազմված փաստաթղթեր (օրինակ՝ հատակագծեր, գծագրեր կամ նախորդ միջամտությունների վերաբերյալ գրառումներ):
բ) Եթե այո, ապա որտեղ են դրանք գտնվում/հմ մոտ են պահվում:
գ) Արդյո՞ք նախորդ փաստաթղթերում նշված է վնասված շենքի նշանակությունը (գեղագիտական, պատմական, մշակութային, կրոնական, գիտական և (կամ) տնտեսական):
դ) Շենքի հոգևոր, կրոնական կամ այլ ոչ նյութական նշանակության դեպքում, արդյո՞ք անհրաժեշտ է պահպանել որոշակի ընթացակարգեր, հատուկ աշխատանքային մեթոդներ կամ իրականացնել որոշակի գործողություններ: Եթե այո, ապա նշեք ինչպիսի գործողություններ են անհրաժեշտ և որտեղ կարելի է գտնել կոնկրետ մարդկանց (կրոնական առաջնորդներ, համայնքի ավագանու անդամներ և այլն), որոնք կարող են կատարել այդ գործողությունները:
- 8 Ի՞նչ աստիճանի է վնասը. թեթև, միջին, ծանր, թե՛ ամբողջական փլուզում:



9 Ինչ նյութերից է կառուցված շենքը, ինչ շինարարական համակարգ է օգտագործվել դրա կառուցման ժամանակ, և շենքի հր հատվածն է վնասվել (օրինակ՝ պատերը, տանիքը, հատակը կամ կառուցվածքային տարրերը):

I Պատ

II Տանիք

III Հատակի ծածկույթ

IV Կառուցվածքային տարրեր

10 Նկարագրեք շենքի կրած կարևոր ոչ կառուցվածքային վնասները և նշեք դրանք շենքի հատակագծի վրա:

Լուսանկարեք տարբեր աստիճանի վնասները, նշեք համապատասխան լուսանկարների համարները հատակագծի վրա:

11 Թվարկեք անմիջական ռիսկերը.

Առաջնային ռիսկ	Երկրորդական ռիսկեր	Անմիջական ռիսկ (ինարավոր ազդեցություն) անվտանգության/ մշակութային արժեքների վրա)	Խոցելիության գործոններ (հիմնական պատճառները)
Երկրաշարժ	Հետցնցումներ, հրդեհ	18-րդ դարում կառուցված շենքի փայտե տարրերը կարող են բռնկվել: Շենքի հարևանությամբ ապրող տեղահանված անձինք կարող են զոհվել:	Վատ պաշտպանված էլեկտրալարեր. շենքի հարևանությամբ ապրող տեղահանված անձինք օգտվում են էլեկտրականությունից և գազից:

12 Արդյո՞ք վնասված շենքի (շենքերի) մոտակայքում կան անվտանգ աշխատանքային տարածքներ, որոնք կարող են օգտագործվել շենքի վթարային վիճակի կայունացման և արժեքավոր իրերի և (կամ) նյութերի պահպանման համար:

13 Արդյո՞ք տարածքը բեկորներից մաքրելու անհրաժեշտություն կա:

14 Արդյո՞ք վնասված շենքի (շենքերի) հարևանությամբ միջին և ծանր բեռնատարողության մեքենաները կայանելու տեղ կա:





- 15** Թվարկեք այն անհետաձգելի գործողությունները, որոնք պետք է ձեռնարկվեն շենքի անվտանգությունն ու վիճակի կայունացումն ապահովելու համար: Հնարավորության դեպքում նշեք այդ գործողությունների արժեքը՝ խորհրդակցելով պահպանության ծառայության և տեղական փորձագետների հետ:



Մակարդակ 4. Առարկաներ /ավաքածուներ

- 1** Շենքի դիրմասում են տեղակայված հավաքածուներ/առարկաները: Նշեք հարկը և սենյակի համարը:
- 2** Արդյո՞ք առարկաները գտնվում են իրենց տեղակայման վայրերում նախքան պատահարը: Եթե ոչ, նշեք նոր տեղակայման վայրը հատակագծի կամ տարածքի քարտեզի վրա:
- 3** Հավաքածուի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ.
 - ա) Արդյո՞ք գոյություն ունեն հավաքածուի վերաբերյալ ավելի վաղ փաստաթղթեր (օրինակ՝ գույքագրումներ, մուտքերի գրանցամատյան, համացանկ): Եթե այո, ապա որտեղ են դրանք գտնվում/հում մոտ են պահվում:
 - բ) Արդյո՞ք նախորդ փաստաթղթերում նշված է վնասված առարկաների նշանակությունը (գեղագիտական, պատմական, մշակութային, կրոնական, գիտական և տնտեսական):
 - գ) Առարկաների հոգևոր, կրոնական կամ այլ ոչ նյութական նշանակության դեպքում արդյո՞ք անհրաժեշտ է պահպանել որոշակի ընթացակարգեր, հատուկ աշխատանքային մեթոդներ կամ իրականացնել որոշակի գործողություններ: Եթե այո, ապա նշեք ինչպիսի գործողություններ են անհրաժեշտ, և որտեղ կարելի է գտնել կոնկրետ մարդկանց (կրոնական առաջնորդներ, համայնքի ավագանու անդամներ և այլն), որոնք կարող են կատարել այդ գործողությունները:
- 4** Գրանցեք վնասված առարկաների տեսակները. օրինակ՝ նկարներ, մետաղադրամներ, զրքեր, ձեռագրեր, փաստաթղթեր, լուսանկարներ, աուդիո ժապավեններ, տեսաերիզներ, որմնանկարներ, խճանկարներ, քանդակներ և այլն:
- 5** Ձեր գնահատմամբ՝ մոտավորապես քանի՞ առարկա է վնասվել: Եթե վնասված առարկաները կուտակված են իրար վրա, և դժվար է գնահատել դրանց քանակը, որոշեք կույտի չափերը (բարձրությունը, երկարությունը և լայնությունը), լուսանկարեք այն և նշեք լուսանկարի համարը ձևաթղթում, ինչպես նաև հատակագծի կամ տարածքի քարտեզի վրա:



6 ա) Արձանագրեք հասցված վնասի տեսակը.

- Թրջված
- Այրված
- Դեֆորմացված
- Կոտրված
- Պատռված
- Ճաքած
- Բորբոս
- Վնասատուներ
- Աղտոտում
- Մուր
- Քիմիական նստվածք
- Այլ (պարզաբանեք)

բ) Նշեք վնասի աստիճանը

1-ին աստիճան (թեթև). առարկային հասցված վնասը չի ավելանա դրա հետ զգույշ վարվելու դեպքում (առարկան կարելի է տեղաշարժել, և այդ ընթացքում լրացուցիչ զգուշություն չի պահանջվում):

2-րդ աստիճան (միջին). առարկայի հետ զգույշ և հանգիստ վարվելու դեպքում դրան հասցված վնասը չի ավելանա: Սակայն դրա հետ չափազանց կոպիտ վարվելու դեպքում հասցված վնասի ավելանալու հավանականությունը խիստ մեծանում է:

3-րդ աստիճան (ծանր). առարկայի հետ անգամ շատ զգույշ և չափազանց նուրբ վարվելու դեպքում կարող է տեղի ունենալ վնասի ավելացում:

Լուսանկարեք վնասի տարբեր տեսակները, նշեք լուսանկարների համարները հատակագծի վրա:

7 Թվարկեք առարկաներին /հավաքածուներին սպառնացող անմիջական ռիսկերը.

Առաջնային ռիսկ	Երկրորդական ռիսկեր	Անմիջական ռիսկ (Հնարավոր ազդեցություն անվտանգության/ մշակութային արժեքների վրա)	Խոցելիության գործոններ (Հիմնական պատճառներ)
Ջրհեղեղ	Բորբոս	1-ին հարկում և նկուղում գտնող օրգանական առարկաները կտուժեն: Շենքում բորբոսը սպառնալիք կլինի անձնակազմի և փրկարարների համար:	Տարածք տանող հիմնական ճանապարհը վնասվել է, շենքը կնքված և փակված է, պատուհանները հնարավոր չէ բացել, էլեկտրականություն չկա:





- 8** Արդյո՞ք մոտակայքում կան ապահով վայրեր, որոնք կարելի է օգտագործել իրադրությունը կայունացնելու կամ առարկաները պահելու համար:
- 9** Արդյո՞ք վնասված առարկաներով տարածքում կամ դրա հարևանությամբ միջին և ծանր բեռնատար մեքենաները կայանելու տեղ կա:
- 10** Թվարկեք այն անհետաձգելի գործողությունները, որոնք պետք է ձեռնարկվեն շենքի անվտանգությունն ու կայունացումը ապահովելու համար: Հնարավորության դեպքում նշեք այդ գործողությունների ֆինանսական արժեքը՝ խորհրդակցելով պահպանության ծառայության և տեղական փորձագետների հետ:



Պատահարի վայրում ոչ նյութական մշակութային ժառանգության վնասի և ռիսկերի գնահատում և գրանցում

Ձևաթուղթ 2

Ստորև ներկայացված ձևաթուղթը սահմանում է տեղեկատվության մակարդակները և հնարավոր դաշտերը, որոնք կարող են հաշվի առնվել ոչ նյութական մշակութային ժառանգությանը հասցված վնասի և ռիսկերի տեղում գնահատման ձևաթուղթը մշակելիս:

Անհրաժեշտ կլինի հարմարեցնել ստացված տեղեկատվությունը՝ տվյալ տարածքին բնորոշ ոչ նյութական մշակութային ժառանգության մասին տվյալները ձևաթղթում ներառելու համար, և սա հարկավոր է անել մինչև աղետը: Այնուամենայնիվ, քանի որ երկու նույնանման արտակարգ իրավիճակներ չեն լինում, այս ձևաթղթերն անհրաժեշտ կլինի համապատասխանեցնել կոնկրետ աղետալի պատահարին և ոչ նյութական մշակութային ժառանգության վրա այդ աղետի ունեցած հետևանքներին:

- 1 Գնահատման ամսաթիվ (ամսաթվեր)
- 2 Գնահատող(ներ)ի անուն(ներ)
- 3 Գնահատող(ներ)ի կոնտակտային տվյալներ

Մակարդակ 1: Մարզ/քաղաք/շրջան

- 1 Քաղաքի/շրջանի անուն և աշխարհագրական կորդինատներ
- 2 Պատահարի նկարագրություն
- 3 Առաջնային սպառնալիքի բնույթ (օրինակ՝ բնական կամ տեխնածին աղետ)
Բնական աղետներ. երկրաշարժ, փոթորիկ, պտտահողմ, ջրհեղեղ, հրդեհ և այլն:
Տեխնածին աղետներ. վանդալիզմ, հրկիզում, միջուկային ճառագայթում, պատերազմ/ռազմական գործողություններ և այլն:
- 4 Տարածքի գտնվելու վայրը՝ կորդինատներով (անհրաժեշտության դեպքում):
- 5 Տարածքի հիմնական քարտեզ՝ բաղադրիչների գտնվելու վայրով (անհրաժեշտության դեպքում):



Մակարդակ 2. Մշակութային ժառանգության տարր

- 1 Նյութի անվանումը / նկարագրությունը
- 2 Նյութի տեսակը
 - ա. Բանավոր ավանդույթներ և արտահայտություններ՝ ներառյալ լեզուն
 - բ. Կատարողական արվեստ
 - գ. Անօրյա կյանք, ծեսեր և տոնաձիսական միջոցառումներ
 - դ. Բնության և տիեզերքի վերաբերյալ գիտելիքներ ու պատկերացումներ
 - ե. Ավանդական արհեստ

Վերը թվարկված տարրերի տեսակները համապատասխանում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003 թ. «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիային: Չնայած հեշտ չէ տարբերակել այս կատեգորիաները՝ արտակարգ իրավիճակներից հետո մասնագետների թիմերին խորհուրդ է տրվում համաձայնեցնել այս կատեգորիաների իրենց մեկնաբանությունները և դրանք դասակարգել ըստ համապատասխան խմբերի: Տվյալ տարրի տեսակի որոշման հիմնական նպատակն է պատկերացում կազմել, թե ոչ նյութական մշակութային ժառանգության որ տեսակներն են (առավելագույն չափով) տուժել: Անհրաժեշտության դեպքում խմբերը կարող են նաև փոխարինել այս կատեգորիաները տեղական պայմաններին ավելի հարմար եզրույթներով (օրինակ՝ փառատոներ, դիմակահանդես, երաժշտություն, կրոնական ծեսեր):

- 3 Պաշտպանության մակարդակ. միջազգային/ պետական/համայնքային/անպաշտպան
- 4 Մշակութային արդյունաբերության, արհեստների և այլնի դեպքում նշեք, թե ստորև նշվածներից որոնք են տուժել.
 - ա. Հումք
 - բ. Արտադրական տարածքներ, մեքենաներ, գործիքներ, արտադրանքի կամ նյութերի պաշարներ
 - գ. Անձնակազմ, հմուտ աշխատուժ
 - դ. Շուկաներ (վաճառք և հաճախորդներ)
 - ե. Հմտությունների փոխանցում



5 Ազդեցության նկարագրություն.

Նշված երեք մակարդակների դեպքում նկարագրեք, թե ինչպիսի վնաս է հասցվել մշակութային ժառանգությանը: Նաև հաշվի առեք հասանելիության, երկարաժամկետ առումով փոխանցման և շարունակականության գործոնները.

- ա.** Նյութական արժեքներ. թեթև/միջին/ծանր
- բ.** Մարդկային ռեսուրսներ. թեթև/միջին/ծանր
- գ.** Գիտելիքներ և ավանդույթներ. թեթև/միջին/ծանր

Նշում՝ «վնասի աստիճանների» վերաբերյալ. մշակութային ժառանգության տարրի վրա վնասի ազդեցության աստիճանը (թեթև, միջին կամ ծանր) կախված է կոնկրետ իրավիճակից: Հնարավորության դեպքում համեմատեք նույն տեսակի տարբեր ոչ նյութական մշակութային ժառանգության (օրինակ՝ տարբեր փառատոներ) կամ տարբեր տեսակի ոչ նյութական մշակութային ժառանգության (փառատոներ, կրոնական արարողություններ, արհեստներ և այլն) վրա վնասի ազդեցության ծանրությունը: Մեթոդաբանությունը պետք է համաձայնեցվի գնահատման խմբի կողմից՝ նախքան գնահատումը սկսելը և կարող է ճշգրտվել այն իրականացնելուց հետո՝ ամբողջ խմբի հետ քննարկման ընթացքում: Վնասի մակարդակի գնահատման հիմնական նպատակն է պատկերացում կազմել, թե ոչ նյութական մշակութային ժառանգության որ տեսակներն են կամ ոչ նյութական մշակութային ժառանգության որ հատուկ տարրերն են ավելի շատ տուժել, քան մյուսները:

- 6** Ո՞րն է շահագործման շարունակականության աստիճանը. չի խափանվել/ամբողջովին խափանվել է/խափանվել է կոնկրետ վայրում, բայց շարունակվում է այլ վայրերում:
- 7** Նկարագրեք, թե ինչպես է մշակութային ժառանգության տարրի վրա ազդեցությունն անդրադառնում տվյալ համայնքի վրա:

Հնարավորության դեպքում (եթե տվյալներն առկա են կամ գնահատելի) նշեք տուժած մարդկանց/տնտեսությունների մոտավոր թիվը կամ տոկոսը (նշեք համապատասխան կատեգորիա).

- ա.** Ուղղակի
- բ.** Անուղղակի





- 8 Ինչպիսի՞ երկրորդային ռիսկեր կարող են ազդել մշակութային ժառանգության վրա: Թվարկեք այդ ռիսկերը և պարզաբանեք դրանց հնարավոր ազդեցությունը:

Առաջնային ռիսկ	Երկրորդային ռիսկ	Անիմջական ռիսկ (Հնարավոր ազդեցություն անվտանգության/ մշակութային արժեքների վրա)	Խոցելիության գործոններ (հիմնական պատճառներ)
Երկրաշարժ	Հետցնցումներ, հրդեհ	Գործող մասնագետների կյանքը վտանգված է:	Անբավարար բնակարանային պայմաններ. ապահովագրության կամ ապահովագրական ծածկույթի բացակայություն:





Վնասի վերաբերյալ տվյալների հավաքման խորհուրդներ

- Արտակարգ իրավիճակի անմիջական փուլում պետք է գրանցվի միայն լրջագույն վնասը: Պետք է ժամանակ վատնել դանդաղ և շարունակական վատթարացման գործընթացներն ու ռիսկերն արձանագրելով: Փոխարենը կարելի է սպասել, մինչև իրավիճակն ավելի հարմար լինի հանգամանալից գնահատում իրականացնելու համար:
- Ոչ նյութական ժառանգության կրած վնասը և ռիսկերը գնահատելիս կարելի է սկսել դրա հետ կապված նյութական տարրերի (շենքեր, գործիքներ, տարազներ և այլն) ու մարդկանց գնահատումից: Օրինակ՝ եթե վնաս է հասցվել արհեստներին, գնահատեք արհեստագործական արտադրանքներին, օգտագործվող սարքավորումներին և գործիքներին, անհրաժեշտ հումքին և աշխատատեղերին հասցված վնասը: Միևնույն ժամանակ փորձեք հասկանալ, թե ինչպես են տուժել արհեստագործ վարպետները:
- Խուսափեք վնասը կամ նույն տեղանքը չափազանց շատ լուսանկարելուց, քանի որ դա բարդացնում է տվյալների հավաքման գործընթացը: Փոխարենը փորձեք ստանալ մի քանի լավ որակի ընդհանուր պլանի և ըստ անհրաժեշտության արված համապատասխան մանրամասներով լուսանկարներ:
- Տվյալների հավաքմանը հնարավորինս օբյեկտիվ մոտեցում ցուցաբերեք՝ հիմնվելով վիզուալ դիտարկումների և հարցազրույցների վրա:
- Փորձեք խուսափել մեկնաբանություններից և վերլուծություններից, եթե չունեք անհրաժեշտ որակավորում:
- Հետևողական եղեք տվյալների հավաքման հարցում և հավաքեք այն ձևաչափով, որը կարող է հեշտությամբ վերարտադրվել: Համադրեք հավաքված տվյալները հարցազրույցների հետ:
- Մի հիմնվեք միայն հավաքված թվային տվյալների վրա: Շատ կարևոր է նաև խոսել մարդկանց հետ, հատկապես շահագրգիռ կողմերի, օրինակ՝ տարածքը ղեկավարող անձանց, տեղական համայնքների և իշխանությունների ներկայացուցիչների հետ:
- Տվյալները պետք է դյուրին լինեն ընթերցելու և մեկնաբանելու համար:
- Ուշադիր եղեք մանրուքների մեջ կարող է արժեքավոր տեղեկատվություն լինել:





- Տվյալների կորստից պաշտպանվելու համար հավաքեք դրանք տարբեր միջոցներով՝ գնահատման ձևաթղթերի, գրառումների, էքսիզների, լուսանկարների և տեխնոլոգիական գործիքների:
- Մշակութային ժառանգությանը հասցված վնասի մասին տվյալները հաճախ գաղտնի են և երբեմն խնդրահարույց: Միջոցներ ձեռնարկեք հավաքած տվյալները պաշտպանելու համար (օրինակ՝ օգտագործեք ծածկագրված համակարգչային կոշտ սկավառակ) և դրանք փոխանցեք միայն համապատասխան մարմիններին:



Շենքերին և շինություններին հասցված կոնստրուկտիվ վնասի տեսակները

Ստորև թվարկված են մի շարք կառուցվածքային և ոչ կառուցվածքային տիպական վնասներ, որոնք հասցվել են պատմամշակութային հուշարձան հանդիսացող շենքերին ու կառույցներին տարբեր աղետների արդյունքում, ինչպիսին են երկրաշարժը, փոթորիկները, հրդեհները և ջրհեղեղները:

Այս բաժնում նշվում են տարբեր վտանգավոր պատահարների արդյունքում հետևյալ կատեգորիայի կառույցներին և նյութերին պատճառված վնասի տեսակները: Սակայն այս ցանկը սպառիչ չէ: Պետք է հիշել, որ որոշ տեսակի կառույցների դեպքում թվարկված տիպական վնասները կարող են առաջանալ նաև այլ տեսակի կառույցներում: Դա կախված է նաև նրանից, թե որտեղից է գալիս վտանգը: Օրինակ՝ շենքում հրդեհի պատճառած վնասը կախված կլինի հրդեհի վայրից:

- **Քարե շինություն՝** կրող պատերով և եռանկյունաձև տանիքով
- **Փայտե շրջանակներով կառույց**
- **Բնական շինանյութերով կառուցված շինություն՝** կրող պատերով, կամարներով և գմբեթներով




Պատմամշակութային հուշարձան հանդիսացող վնասված օբյեկտները, որոնք դեռ կանգուն են, նույնպես կանգնած են փլուզման վտանգի առաջ: Ուստի, նպատակահարմար է օգնություն խնդրել վերականգնող ճարտարապետից կամ ինժեներից, որը համապատասխան մասնագիտական հմտություններ ունի պատմամշակութային ժառանգության շինությունների հետազա փլուզման վտանգը կանխարգելելու համար:



Քարե շինություն՝ կրող պատերով, փայտե շրջանակներով և եռանկյունաձև տանիքով



Վտանգ՝ երկրաշարժ, փոթորիկ



- 1 Վնասը ուղղահայաց և հորիզոնական հարթությունների հատման կետում:
- 2 Տանիքը վնասվում է. սա տեղի է ունենում, երբ կղմինդը կամ ծածկի մյուս տարրերն ապահով չեն ամրացված և չեն կարող դիմակայել վեր քաշող ուժին, որ լինում է փոթորիկների ժամանակ: Ծայրահեղ դեպքերում տանիքի ծածկը կարող է պոկվել:
- 3 Ճկվող պատեր. երբ պատի երկու կողմերը վատ են միացված, պատերը հեշտությամբ ճկվում են՝ ենթարկվելով կողմնակի ուժերի ազդեցությանը:
- 4 Անկյունագծային ճաքեր. սրանք տիպիկ ճաքեր են, որոնք առաջանում են հարթությունից դուրս կողային ուժերի ճնշման տակ կտրվածքային լարումների նկատմամբ քարե պատերի ցածր դիմադրողականության հետևանքով: Նման ճաքերը սովորաբար առաջանում են պատի ամենաթույլ հատվածում:
- 5 Թեք պատեր. երբ մի պատը մյուս պատին շատ մոտ է կանգնած, այն կարող է թեքվել հարթությունից դուրս կողային ուժերի ազդեցության տակ:


- 6 Անկյունային ճաքեր. առաջանում են լարվածության ավելացման պարագայում, ինչը հարթությունից դուրս կողային ուժերի ճնշման տակ L-աձև, T-աձև կամ C-աձև շենքերի թևերի ամրության աստիճանների տարբերության հետևանք է:
- 7 Շենքի ճակատամասի անջատում. սա սովորաբար ակնհայտ է դառնում շենքի անկյունների ճաքերից, որոնք հայտնվում են յուրաքանչյուր հարկում և աճում են շենքի ներքևից վերև ուղղությամբ կամ ճեղքերի տեսքով հանդիպում ներքին պատերի և ճակատամասի մոտ գտնվող հատակի վրա:
- 8 Ֆրոնտոնային/ճակատային պատի փլուզում. ֆրոնտոնային պատը բարձրության և հաստության ամենամեծ հարաբերակցությունն ունի և սովորաբար թույլ է ամրացված տանիքին: Ֆրոնտոնային պատերը հեշտությամբ քանդվում են իրենց հարթությունից դուրս կողային ուժերի ազդեցության տակ:
- 9 Ծխնիներից պոկվող դռներ. փայտե դռները կամ փեղկերը կարող են պոկվել ծխնիներից, հատկապես եթե դրանք բաց են եղել աղետի պահին:
- 10 Փափուկ հարկի փլուզում. երբ հատակի կամ հարկի կարծրությունը/ամրությունը զիջում է վերևի հարկի կարծրությանը/ամրությանը (օրինակ՝ երբ այն ունի մեծ բացվածքներ ճակատամասում), այն հեշտությամբ կարող է փլուզվել հորիզոնական ուժերի ազդեցության տակ:



Բնական շինանյութերով կառուցված շինություն՝ կրող պատերով, կամարներով և գմբեթներով



Վտանգ՝ երկրաշարժ, փոթորիկ



- 1 Կամարի մասնակի փլուզում. կամարի տեղաշարժման դեպքում շինության հիմնական մյուս մասերը կարող են տեղաշարժվել, և կամարի ամբողջականությունը կարող է խախտվել: Քանի որ կամարի մնացած մասերը շարված են այնպես, որ ունեն քիվի տեսք, դրանք հեշտությամբ կարող են փլուզվել: Սա առավել վտանգավոր է, քանի որ կամարները հաճախ ծառայում են որպես կառուցի այլ մասերի հենարան:
- 2 Ուղղահայաց փոքր ճաքեր գմբեթի հիմքում. նման ճաքերն առաջանում են կարճատև վտանգի պատճառով, որի ընթացքում աճում է լարվածության ուժը. այս ճաքերը վտանգավոր չեն, եթե հարակից պատերը կայուն են: Գմբեթները սովորաբար շատ դիմացկուն են կողային ուժերի ճնշման նկատմամբ:
- 3 Հենարանի փլուզում. եթե պատը և հենարանը բավականաչափ ամուր կապված չեն, հենարանը կփլվի և պատի փլուզումը անխուսափելի կլինի:
- 4 Անկյունագծով ձգվող, չտարանջատվող ճաքեր. այս ճաքերը թուլացնում են կառույցը, սակայն վտանգավոր չեն, եթե կրող տարրերի միջև տարանջատում չկա:
- 5 Փոքր երկայնական ճաքեր կամարի վրա. նման ճաքերը թուլացնում են կամարը, բայց անհապաղ փլուզման սպառնալիք չկա, եթե հարակից պատերը կամ հարակից կամարները կայուն են:
- 6 Կամարի ճաքեր. հարակից պատի փլուզումն ի հայտ է բերում լարման ուժ, որը հանգեցնում է կամարի երկայնական ճաքերի




առաջացմանը և, ի վերջո, փլուզմանը: Կամարածածկ նկուղները սովորաբար շատ դիմացկուն են կողային ուժերի ճնշման նկատմամբ, քանի որ հարակից պատերն ամուր են:

- 7** Տանիքի տախտակների փլուզում. երբ կրող պատը տեղաշարժվում է, պատին հենված տանիքի տախտակները կարող են թուլանալ և փլուզվել, քանի որ պատի մակերեսը, որի վրա հենվում են տախտակները, կրճատվում է: Սրա հետևանքով ոչնչանում է տանիքի տախտակների հենարանը:
- 8** Հորիզոնական ճաքեր. այս ճաքերը հայտնվում են տարբեր նյութերի միջերեսում: Դրանք վտանգավոր չեն, քանի դեռ պատի մի մասը դուրս չի գալիս հարթությունից:



Փայտաշեն կառույց

Վտանգ՝ երկրաշարժ, փոթորիկ




- 1 Պոկված տանիք. շինության ճակատամասին ուժգին քամու հարվածից տանիքը կարող է պոկվել: Բաց պատշգամբների դեպքում տանիքն առավել խոցելի է, քանի որ տանիքի բաց մակերեսը զգալիորեն մեծ է: Արդյունքում՝ տանիքի չամրացված տարրերը վերածվում են անվերահսկելի արկերի, որոնք ընկնելով այնպիսի ճեղքավաճքներ են առաջացնում, որ ջուրն անարգել ներթափանցում է շինության մեջ:
- 2 Ծխնելույզի փլուզում. ծխնելույզները հատկապես խոցելի են հզոր կողային ուժերի նկատմամբ՝ հաշվի առնելով դրանց չափը, ձևը, տեղադրման վայրը և քանակը: Նման փլուզումները հանդիպում են նաև քարե շինությունների դեպքում:
- 3 Շաղախով կառուցված պատի փլուզում. եթե պատերը լավ ամրացված են, դրանք չպետք է ենթարկվեն կողային ուժերի ազդեցությանը: Այնուամենայնիվ, եթե պատը հուսալիորեն ամրացված չէ հիմնական կառույցին, այն հեշտությամբ կփլուզվի:
- 4 Անվերահսկելի փլուզումներ. փոթորիկների և ռումբի պայթյունների հետևանքով շինության տարբեր տարրերը (հատկապես դռները և պատուհանները) կարող են կոտրվել և տեղաշարժվել՝ վերածվելով վտանգավոր արկերի:
- 5 Տարրալվացման հետևանքով առաջացած հիմքի նստեցում. երևույթ, որի դեպքում հողի գրունտային շերտերի ամրությունը և կայունությունը մեծապես կրճատվում են երկրաշարժերի հետևանքով: Այս ամենի արդյունքում հողն այլևս ի վիճակի չի լինում պահել շենքի հիմքը և կարող է զգալի վնաս պատճառել շինությանը:
- 6 Հարակից շինության ոչնչացում. կողային ուժերի ուժգնության հետևանքով շինությունը կարող է հիմքից պոկվել, հատկապես եթե այն կառուցված է արտաքին հենապատի վրա:
- 7 Շրջապատում գտնվող բարձր առարկաների փլուզում. մշակութային ժառանգության օբյեկտ հանդիսացող շենքերի շրջապատում գտնվող ծառերը կամ սյուները կարող են ընկնել շենքի վրա՝ վնասելով տանիքը կամ շենքի այլ մասերը:



Քարե շինություն՝ կրող պատերով, փայտե շրջանակներով և եռանկյունաձև տանիքով



Վտանգ՝ ջրհեղեղ, հրդեհ



- 1 Տանիքի փլուզում. կրակի ազդեցությունը թուլացնում է փայտի դիմադրողականությունը: Եթե շինության փայտե շրջանակը վնասված է, այն կարող է հիմնական պատի փլուզման պատճառ դառնալ:
- 2 Երկաթե կամ պողպատե ամրանների փլուզում. երկաթե և պողպատե ամրանները սկսում են կորցնել դիմացկունությունը բարձր ջերմաստիճանի ազդեցության ներքո (300°C): Ավելի մեծ ծանրություն կրելու դեպքում, օրինակ՝ երբ այդ ամրաններն օգտագործվում են որպես պատուհանի վերնամաս, դեֆորմացվում են, և այլևս հնարավոր չի լինում դրանք համապատասխան կարգավիճակով օգտագործել: Արդյունքում սա կարող է հանգեցնել ամրանների վրա հենվող աղյուսե շարվածքի մասնակի փլուզման:
- 3 Փայտե ամրանների փլուզում. փայտե ամրանների վրա հենվող աղյուսե շարվածքը դանդաղեցնում է փայտի այրման արագությունը, և դա թույլ է տալիս, որ բավականաչափ փայտանյութ պահպանվի ծանրությունը պահելու համար: Հակառակ դեպքում դա կարող է հանգեցնել փայտե ամրանի վրա հենվող աղյուսե շարվածքի փլուզմանը:
- 4 Պատերի փլուզում. եթե պատերն ամրացված չեն տանիքին կամ հատակին, կարող են հեշտությամբ շրջվել և, հետևաբար, ավելի խոցելի են համարվում կողային ուժերի ազդեցության նկատմամբ:



- 5 Մասնակի փլուզում ծանր լողացող բեկորների պատճառով. շենքի անկյուններում տեղակայված թույլ կառուցվածքային տարրերը, ամենայն հավանականությամբ, կվնասվեն լողացող մեծ բեկորներից կամ արագ հոսող ջրից: Պատերը միմյանց թույլ են ամրացված, անհրաժեշտ է դրանք ամրացնել: Առաջ եկած աղյուսե շարվածքը պետք է ամրացվի:
- 6 Կեղտի նստվածքները դանդաղեցնում են չորանալու գործընթացը և կարող են վտանգավոր լինել առողջության համար, քանի որ կեղտը կարող է խթանել բորբոսների և բակտերիաների աճը: Բացի այդ՝ կեղտի նստվածքը կարող է հետքեր թողնել քարե պատերի վրա: Հետևաբար, այն պետք է հնարավորինս շուտ հեռացնել:
- 7 Երկաթե և պողպատե ամրանների ընդարձակում. հրդեհի դեպքում երկաթե և պողպատե ամրանները կարող են զգալիորեն ընդարձակվել: Արդյունքում ճաքեր են առաջանում աղյուսե շարվածքում, ինչը կարող է հանգեցնել բարակ միջնորմների թեքմանը: Քանի դեռ ամրանների ծանրաբեռնվածությունը մեծ չէ, սառչելուց հետո դրանք սովորաբար վերադառնում են իրենց նախկին ձևին և մեծ մասամբ վերականգնում են ամրությունը:
- 8 Հրդեհներն ու ջրհեղեղները սովորաբար խափանում են էլեկտրաէներգիայի, ջրի և գազի մատակարարումը: Անգամ այն դեպքում, երբ մատակարարումը չի ընդհատվում, խորհուրդ է տրվում անջատել գազով և էլեկտրական հոսանքով աշխատող բոլոր սարքերը, քանի որ դրանք կարող են վնասվել, և չի կարելի ջուր օգտագործել, քանի որ այն կարող է աղտոտված լինել:





Բնական շինանյութերով կառուցված շինություն՝ կրող պատերով, կամարներով և գմբեթներով

Վտանգ՝ ջրհեղեղ, հրդեհ



- 1 Շաղախի էրոզիա. շաղախի էրոզիան առաջանում է ջրի հետ շփման պատճառով:
- 2 Կավե պատերի փլուզում. թրջվելիս՝ կավե կամ հում աղյուսով կառուցված պատերը կորցնում են կրող կարողությունը և կարող են փլուզվել: Կավե պատերն իրենց կրող կարողությունը վերականգնում են չորանալուց հետո, սակայն դեֆորմացիան և ճաքերն այլևս չեն վերանա և կթուլացնեն պատերը:
- 3 Փայտե տարրեր, որոնք ամրացված են հողի և (կամ) կրաքարի շաղախով. հողը և կրաքարը հրակայուն հատկություններ ունեն: Բավարար հաստություն ունենալու դեպքում (5 սմ), շաղախի այս տեսակները կանխում են փայտի կամ ծղոտի բռնկումը: Ավելին՝ քանի որ շաղախը օդի թափանցելիություն ունի, այն թույլ է տալիս, որ փայտը կամ պատի հիմնական մասը չչորանան:
- 4 Պատերի և շաղախի նստեցման ճաքեր. կավով և կրաքարով շաղախները հակված են նստելու և ճաքելու դրանց մեջ ջրի պարունակության չափաբաժնի կտրուկ փոփոխության դեպքում: Դատելի է ունենում, երբ կարճ ժամանակահատվածում ջերմաստիճանի կտրուկ փոփոխություն է լինում: Եթե շինությունն ամրացնող շաղախը լավ է պահպանվել, զգուշացեք հրդեհից հետո օդի ցածր ջերմաստիճանից: Նույն տրամաբանությամբ՝ գերտաքացնելով մի չորացրեք շենքերը ջրհեղեղից հետո:
- 5 Գրունտի ընդարձակում. կավի ծավալը մեծանում է՝ դրա մեջ ջրի պարունակության աճելուն զուգահեռ: Սա կարող է հանգեցնել գրունտի զգալի տեղաշարժի և պատերի բարձրացման: Անգամ չորանալուց հետո գրունտի ընդարձակման արդյունքում առաջացած վնասը հնարավոր չի լինի վերացնել:
- 6 Պատի հիմքի և շաղախի քայքայում. հողի խոնավությունը բարձրանում է պատերի հիմքից և կարող է պարունակել աղեր, որոնք

բյուրեղանում են, երբ ջուրը գոլորշանում է: Սրա հետևանքով կարող է սպիտակ փոշի առաջանալ պատերի մակերեսին ու երբեմն հանգեցնել աղյուսե շարվածքի և շաղախի շերտագատմանը: Անթափանց ծածկույթների (նշված են կարմիր գծերով) առկայության հետևանքով խոնավությունը վեր է բարձրանում: Եթե խոնավությունը չի գոլորշանում, կարող է թուլացնել պատի ամրությունը՝ մեծացնելով փլուզման վտանգը:

- 7 Նկուղում երկար պահպանվող խոնավություն. նկուղներում, որոնք վատ են օդափոխվում, սովորաբար երկար ժամանակ է պահպանվում հեղեղներից գոյացած ջուրը: Սա հանգեցնում է խոնավության և դրանից բխող երկարատև ազդեցության:






Փայտե շրջանակով շինություն



Վտանգ՝ ջրհեղեղ,
հրդեհ




- 1 Բարակ փայտե տարրերի ոչնչացում. բարակ փայտե տարրերը, դրոնք կատարում են կառուցվածքային գործառույթներ, օրինակ՝ փայտե չորսուն, որն օգտագործվում է տանիքի ծածկը, փայտյա հատակը կամ երեսպատումն ամրացնելու համար, հեշտությամբ այրվում է հրդեհի դեպքում:
- 2 Խորը ճաքեր փայտե շրջանակի վրա. հրդեհի ժամանակ փայտից պատրաստված տարրերը սկսում են այրվել, դրանց արտաքին շերտերը վերածվում են փայտածուխի, և մակերեսի վրա ձևավորվում է կոպիտ նախշ: Սա փայտե դետալի միջուկը պաշտպանում է վնասվելուց: Ավանդական փայտե շրջանակները սովորաբար մեծ չափեր ունեն: Հետևաբար փայտե միջուկը կարողանում է պահել տանիքի ծանրությունը, նույնիսկ եթե ամրանները վնասվել են հրդեհից: Այնուամենայնիվ, ամրաններն իրար միացնող տարրերն ավելի արագ են այրվում, քանի որ դրանք ունեն ավելի փոքր հատման մակերես և պարունակում են մետաղական տարրեր:
- 3 Բարակ փայտե տարրերի դեֆորմացիա. փայտից պատրաստված բարակ տարրերը՝ հատակը, դռները կամ պանելները, թրջվելիս կարող են դեֆորմացվել կամ ծռնվել: Չորացնելուց հետո փայտե այս տարրերը պետք է վերականգնեն իրենց ձևը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք շատ արագ են չորանում: Սակայն մի քանի շաբաթվա ընթացքում չորացող փայտը, ամենայն հավանականությամբ, չի փչանա:
- 4 Փայտե հատակի թուլացում. փայտից պատրաստված տարրերի կառուցվածքը լրջորեն թուլանում է, եթե մի քանի օր շարունակ

կամ ավելի երկար ժամանակ ծածկված է լինում թաց գորգերով և/կամ կեղտի շերտով:

- 5 Հողի կոշտացում և խոր ողողում: Երբեմն հողը կոշտանում է ջրհեղեղի նահանջից հետո՝ առաջացնելով անհավասար նստեցում: Բացի այդ՝ արագ հոսող ջուրը կարող է առաջացնել խոր էրոզիա, որը մերկացնում կամ քայքայում է հիմքը: Դա լուրջ վնաս է հասցնում այն փայտե տներին, որոնք չունեն բավականաչափ խոր կամ ամուր հիմքեր:
- 6 Փլուզում ջրի ազդեցության հետևանքով. սա կարող է տեղի ունենալ, եթե շենքը հենվում է արտաքին հենապատի վրա, որը խարսխված չէ ամուր հիմքին:



ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԻՃԱԿԻ ԿԱՅՈՒՆԱՅՈՒՄ



Ինչպես պատրաստել առարկաների և բեկորների գտնվելու վայրն արտացոլող ցանց


- 1 Ցանցը պատրաստելիս նախ հաշվի առեք այն տարածքի չափը, ձևը և հասանելիությունը, որտեղից պետք է դուրս բերեք մշակութային առարկաներ կամ պատմական շենքերի բեկորներ: Ցանց կազմելով՝ կարող եք որոշել յուրաքանչյուր բեկորի ճշգրիտ տեղը, ինչը կօգնի վերամիավորել սկզբնական նյութերն ամբողջական կոնսերվացիայի ընթացքում:
- 2 Կախված այն տարածքի չափից, որտեղ պատրաստվում եք մշակութային առարկաների փրկարարական աշխատանքներ իրականացնել, պատրաստեք ցանց՝ չափելով տարածքի երկարությունն ու լայնությունը և այն բաժանելով հավասար քառակուսիների: Պատմական ժառանգության օբյեկտ հանդիսացող քարե շինությունից մեծ բեկորներ կամ աղյուսներ հեռացնելու համար կարող եք մաքրման ենթակա տարածքը բաժանել 5x5 մետր քառակուսիների:
- 3 Խիստ մասնատված նախշազարդ մակերեսները պահպանելու համար օգտագործեք ավելի փոքր ցանցեր (տես լուսանկարը):
- 4 Ցանցը կարելի է տեղադրել բարակ պարանների միջոցով և ամրացնել փոքր մետաղական կամ փայտե սեպերով: Որպես այլընտրանք՝ ծանր քարերը կարող են օգտագործվել պարանները գետնին ամրացնելու համար: Համոզվեք, որ պարանները հստակ տեսանելի են, որպեսզի չսայթաքեք:
- 5 Յուրաքանչյուր քառակուսու համար թվատառային նշագրում օգտագործեք, պիտակավորեք ինքնակաշուններով և ջրակայուն մարկերներով:
- 6 Ցանցերը պատրաստելուց հետո տեղորոշեք և նշեք դրանք տարածքի քարտեզի վրա: Անպայման ներառեք ուղղությունը (օրինակ՝ հյուսիս) և տարածքի հիմնական մուտքերը: Նշեք յուրաքանչյուր ցանցի գտնվելու վայրը, անունը և բջիջների թվատառային ծածկագիրը:



Ցանց՝ Պագոդայի գիպսից զարդանախշերի փոքր բեկորները դուրս բերելու համար, Բադան, Մյանմար, 2016 թ: Լուսանկարը՝ ICCROM

A1	A2	A3
B1	B2	B3
C1	C2	C3

Ցանցի թվատառային գծանշման օրինակ



Էսքիզի նմուշ, որը ցույց է տալիս փարբեր ցանցերի գործվելու վայրը, Մյանմար, 2016 թ. Լուսանկարը՝ է. Կրեյտ




Եթե տարածքը հեղեղված է կամ այնտեղ մնալու ժամանակը սահմանափակ է, ցանցը բաժանեք լայն հատվածների, օրինակ՝ A, B կամ 1, 2 և նշեք դրանք տարածքի քարտեզի վրա՝ նշելով հյուսիսը և հարավը:

Ինչպես ժամանակավոր պահեստում ստեղծել տեղաշարժման ծածկագրեր



Կահույքից զուրկ, ժամանակավոր պահեստային տարածքում տեղաշարժման ծածկագրերի հետևողական համակարգ պատրաստելու հեշտ միջոց է հատակին ցանց գծելը՝ օգտագործելով ներկ, կպչուն ժապավեն կամ պարաններ:

Նախևառաջ տարածքը բաժանեք համապատասխան չափերի քառակուսիների, օրինակ՝ 1մ × 1մ: Օգտագործեք տառեր և թվեր՝ տողերն ու սյունակները տարբերելու համար: Գրանցեք դրանք՝ օգտագործելով պատին կպչող պիտակներ:



Աղբյուր՝ Թանդոն, Ա., 2016. Կրանգված մշակութային ժառանգություն. մշակութային ժառանգության հավաքածուների արտակարգ փարհանում, Փարիզ, ՅՈՒՆԵՍԿՕ, Հոռոմ, ICCROM. Ավելին կարդալու համար՝ սեղմեք հղումը.

<https://perma.cc/7J4C-TJDK>

Ինչպես ստեղծել տեղակայման ծածկագիր և նույնականացման համար

Տեղակայման ծածկագիր ստեղծելու համար օգտագործեք տառերի և թվերի համակցություն՝ տարածքում ցանցերը/վայրերը կամ շենքում սենյակները և հարկերը նշելու համար: Օրինակ՝ Ազգային թանգարանի 1-ին մասնաշենքի առաջին հարկի 17 սենյակից տարհանված առարկայի տեղակայման ծածկագիրը կարելի է կազմել հետևյալ կերպ.

ԱԹ1-Ա-17-2

ԱԹ – Ազգային թանգարան

1 – շենքի համար

Ա– առաջին հարկ

17 – 17 սենյակ

2 – պահարանի համար

Նույն կերպ «Ազգային պարկ» կոչվող վայրում N1 ցանցի A1 բաժնից տարհանված առարկայի տեղակայման ծածկագիրը կարող է գրվել հետևյալ կերպ.

ԱՊ-1-A1

ԱՊ- «Ազգային պարկ»

1 - ցանցի համար

2 - A1- Ցանցի բաժին


Սովորաբար համարակալման նման համակարգերը ներառում են առարկայի գտնվելու վայրի նույնականացումից մինչև դրա կոնկրետ տեղակայման վայրի ճշգրիտ արտացոլումը: Անհրաժեշտության դեպքում օգտագործեք թվեր և տառեր՝ տարածքը, շենքերը, հարկերը, սենյակները և ցուցապահարանները նույնականացնելու համար: Կարևոր է, որ համարակալման համակարգը հետևողական և հասկանալի լինի տարհանման կամ փրկարարական գործողության մեջ ներգրավված ողջ անձնակազմի համար:

Ինչպես ստեղծել եզակի նույնականացման համար և կապել այն գտնվելու վայրի ծածկագրի հետ

Նախքան մշակութային ժառանգության որևէ առարկա տեղափոխելը՝ այն պետք է եզակի նույնականացման համար ստանա, որ հնարավոր լինի հետևել դրա տեղաշարժին փրկարարական կամ տարհանման գործողության ժամանակ: Եզակի նույնականացման համարը և գտնվելու վայրի ծածկագիրն օգնում են նույնականացնել

մշակութային ժառանգության առարկան և դրա սկզբնական գտնվելու վայրը փրկարարական կամ տարհանման գործողության ժամանակ:

Եզակի նույնականացման համարը տարբերվում է գտնվելու վայրի ծածկագրից, քանի որ այն նույնականացնում է մշակութային ժառանգության յուրաքանչյուր առանձին առարկան տվյալ վայրում: Համոզվեք, որ տարհանման կամ փրկարարական նպատակներով մշակված համարակալման համակարգը պարզ է ու մատչելի ներգրավված բոլոր մասնագետների համար: Կարելի է պարզապես համարակալել թվերի աճման կարգով (օրինակ՝ 01, 02) կամ օգտագործել տառերի և թվերի համակցություն (օրինակ՝ A 01, A 02):



ԱԹ 1-Ա-17-2_01

ԱԹ – Ազգային թանգարան

1 – շենքի համար


Ա – առաջին հարկ

17 – 17 սենյակ

2 – պահարանի համար

01– Առարկայի եզակի նույնականացման համար

Եթե առարկան հաջողվել է փրկել ցանցից, ապա եզակի նույնականացման համարը և գտնվելու վայրի ծածկագիրը կարելի է գրանցել հետևյալ կերպ.



ԱՊ 1-Ա1-01

ԱՊ – Ազգային պարկ

1 – Ցանցի համար

Ա1 – Ցանցի բջիջ


01 – Եզակի նույնականացման համար



Եթե տարածքում գտնվելու քիչ ժամանակ ունեք, իսկ սենյակների և դարակների վերաբերյալ նախկին փաստաթղթերը հասանելի չեն, պարզեցրեք գտնվելու վայրի կոդը՝ շենքը բաժանելով լայն հատվածների, օրինակ՝ A, B, C: Գրանցեք հատվածները շենքի էքսիզային հատակագծի վրա: Եթե շենքն ունի մի քանի հարկ, ապա առանձին տառերին ավելացրեք հարկերի համարները, օրինակ՝ A0-ը առաջին հարկն է, A1-ը՝ երկրորդ հարկը և այլն:

Տարհանման գույքագրում

Տարհանման նպատակով գույքագրում իրականացնելու համար օգտագործեք ստորև ներկայացված ձևաթուղթը: Այն կօգնի համարակալել մշակութային ժառանգության առարկաները և հետևել տեղաշարժին, մինչև դրանք տեղափոխվեն ժամանակավոր պահեստավորման անվտանգ վայր:





Քաշ	Սկզբնական գտնվելու վայրի ծածկագիր	Լուսանկարի կամ հատակագծի հղման համար	Նոր վայր	Լուսանկարի կամ հատակագծի հղման համար

Նշեք առարկայի սկզբնական գտնվելու վայրը

Այս դաշտը պետք է լրացվի առարկայի տարիանման ավարտից և այն նոր՝ ավելի անվտանգ վայր տեղափոխելուց հետո:

Բոլոր լուսանկարները և հատակագծերը պետք է գրանցման համար ունենան:

Նշեք առարկայի քաշը: Եթե ձեռքի տակ կշեռք չկա, օգտագործեք նշաններ, օրինակ՝ +՝ քաշը նշելու համար: Օրինակ, եթե իրը կարող է հեշտությամբ տեղաշարժվել ու փոխադրվել մեկ անձի կողմից, օգտագործեք ++: Նմանապես եթե այն բարձրացնելու համար պահանջվում է երկու մարդ, օգտագործեք ++ և+++, եթե այն բարձրացնելու և տեղափոխելու համար անհրաժեշտ է հատուկ սարք:

Փրկարարական գործողության արձանագրում

Ստորև բերված ձևաթղթում ներկայացված է, թե ինչպես գրանցել փրկված իրերի սկզբնական գտնվելու վայրը, դրանց եզակի նույնականացման համարները, վիճակը, դրանց կայունացման համար ձեռնարկված միջոցները և տեղափոխման վերջնական վայրի ծածկագիրը:

1 Որոնում և հայտնաբերում

Գրանցման համար	Սկզբնական գտնվելու վայր	Տրված նույնականացման համար	Նախկին համարներ

Աճման կարգով՝ առաջինից մինչև վերջին նշվում է փրկված առարկաների թիվը:

Այս դաշտում նշվում է առարկային տրված եզակի նույնականացման համարը:

2 Դասակարգում և կայունացում

Սեփականատեր/կառույց	Սկզբնական գտնվելու վայր	Առարկայի տեսակ	Նյութեր	Չափեր, երկարություն, լայնություն և բարձրություն

Այս դաշտում նշվում է փրկված առարկայի սկզբնական գտնվելու վայրի ծածկագիրը: Այս ծածկագիրը կարող է ներառել ցանցի համարը կամ հարկի, սենյակի, դարակի համարների համակցությունը՝ կախված գտնվելու վայրի ծածկագրերի գեներացման համար ընտրված համակարգից:

Դաշտը նախատեսված է առարկայի հակիրճ նկարագրության համար:

Ինչ նյութերից է պատրաստված առարկան՝ ապակուց, կավից, մետաղից, գործվածքից և այլն:

2բ Դասակարգում և կայունացում

Քաշ	Լուսանկարի կամ նկարի գրանցման համար	Վնասի տեսակ և աստիճան	Ճգնաժամային միջամտության նկարագրություն (լրացվում է կայունացման փուլում)	Կայունացման փուլում ճգնաժամային միջամտության հեղինակ
-----	-------------------------------------	-----------------------	--	--

Լուսանկարի կամ գծանկարի գրանցման համարը վերաբերում է տվյալ առարկային: Եթե բավականաչափ ժամանակ վառ տարածքում առարկաներն առանձին լուսանկարելու համար՝ լուսանկարեք մի քանիսը միասին՝ իրենց գրանցման համարներով: Առանձին գրանցեք տվյալ առարկայախմբի լուսանկարի համարը: Այս դաշտը կարելի է լրացնել դասակարգման փուլում կամ ժամանակավոր պահեստում՝ կախված ունեցած ժամանակից:

Վնասի տեսակը հակիրճ նկարագրում է առարկայի ֆիզիկական վիճակը, ինչպես նաև դրան հասցված վնասի տեսակը և աստիճանը:

Լրացրեք մշակութային ժառանգության առարկայի քաշը: Եթե ձեռքի տակ կշեռք չկա, օգտագործեք նշաններ, օրինակ՝ քաշը նշելու համար: Օրինակ, եթե իրը կարող է հեշտությամբ տեղաշարժվել ու փոխադրվել մեկ անձի կողմից, օգտագործեք +: Նմանապես եթե այն բարձրացնելու համար պահանջվում է երկու մարդ, օգտագործեք ++ և +++, եթե այն բարձրացնելու և տեղափոխելու համար անհրաժեշտ է հատուկ սարք:

Այս դաշտը բնութագրում է կայունացման փուլում առարկայի նկատմամբ իրականացված ճգնաժամային միջամտության տեսակը: Օրինակ՝ խոնավ և հողոտված առարկան հարկավոր կլինի լվանալ նախքան նոր ժամանակավոր պահեստ տեղափոխելը: Նման միջամտությունները պետք է իրականացվեն վերականգնողների և մշակութային ժառանգության առարկաներին առաջին օգնություն ցուցաբերող հատուկ մասնագետների կողմից:

3 Փաթեթավորում և տեղափոխում

Տեղափոխող անձ	Ամսաթիվ	Տեղափոխման ծածկագիր
---------------	---------	---------------------

Այս դաշտում նշվում է առարկային տրված տեղափոխման ծածկագիրը, այն երբ ժամանակավոր պահող տեղափոխելուց հետո: Այս դաշտը լրացվում է բոլոր առարկաների տեղափոխումից հետո:

Մշակութային ժառանգության առարկաների խնամքի ուղեցույց

- 1 Փոշոտ կամ աղտոտված առարկաների հետ աշխատելիս օգտագործեք նիտրիլային կամ վինիլային ձեռնոցներ: Համոզվեք, որ ձեռնոցների չափը ճիշտ է և համապատասխանում է ձեր ձեռքերին: Հակառակ դեպքում կարող եք պատահաբար գցել կամ վնասել առարկան:
- 2 Փոխեք ձեռնոցները, երբ դրանք չափազանց կեղտոտված են՝ կրկնակի աղտոտումից խուսափելու համար:
- 3 Փոշոտ կամ կեղտոտ առարկաների հետ աշխատելիս կրեք հակափոշային դիմակ:
- 4 Հանեք զարդերը և այլ արքեսուարները, որոնք կարող են խճճվել կամ առարկան քերծել:
- 5 Նախքան իրերը մի տեղից մյուսը տեղափոխելը՝ գտեք ազատ ճանապարհը և համոզվեք, որ խոչընդոտներ չկան:
- 6 Առարկան միշտ պահեք երկու ձեռքով: Որպեսզի առարկայի քաշը հավասարակշռված լինի, մի ձեռքը դրեք դրա տակ, իսկ մյուս ձեռքով պահեք դրա հիմնական մասը:
- 7 Մի տեղափոխեք իրերը՝ բռնակներից, ծորակներից կամ այլ փխրուն կամ դուրս ցցված տարրերից բռնելով:
- 8 Դժբախտ պատահարներից կամ կոտրվածքներից խուսափելու համար միանգամից շատ իրեր մի տեղափոխեք:
- 9 Հնարավորության դեպքում առարկաները տեղափոխելու համար օգտագործեք տարաներ, տուփեր կամ սկուտեղներ: Առարկաները հեռավորության վրա տեղափոխելու համար օգտագործեք սայլակներ (առկայության դեպքում):
- 10 Ծանր կամ մեծ չափի առարկաների անվտանգ տեղափոխման համար պահանջվում է առնվազն երկու մարդ:



Աղբյուր՝ Թանդոն, Ա., 2016. *Վրանգված մշակութային ժառանգություն. մշակութային ժառանգության հավաքածուների արտակարգ տարհանում, Փարիզ, ՅՈՒՆԵՍԿՕ, Հոռմ, ICCROM.* Հասանելի է հետևյալ հղումով. <https://perma.cc/7J4C-TJDK>

Մշակութային ժառանգության հավաքածուների խորհուրդ. 1998. *reCollections: Մշակութային ժառանգության հավաքածուների պահպանությունն Ավստրալիայում. խնամք, փոխադրում, պահպանություն և ցուցադրություն: Կանթերա, Մշակութային ժառանգության հավաքածուների խորհուրդ: Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://perma.cc/5XRJ-U9R3>*

Մշակութային ժառանգության առարկաների փաթեթավորման ուղեցույց

- 1 Սխալ փաթեթավորումը կարող է տևական ֆիզիկական վնաս հասցնել մշակութային ժառանգության առարկաներին, քանի որ դրանք սովորաբար փխրուն են իրենց տարիքի կամ անցյալում օգտագործվելու պատճառով: Հետևաբար արտակարգ տարիանման համար նման իրերը փաթեթավորելիս կարևոր է հաշվի առնել հետևյալը.



Մշակութային ժառանգության առարկաները փաթեթավորված են Նեպալի ազգային թանգարանի ժամանակավոր պահեստը տեղափոխվելու համար, Կաբմանդու, 2016 թ. Լուսանկարը՝ Ապարնա Թանդոն, ICCROM.

- Օգտագործված փաթեթավորման նյութերը պետք է պաշտպանեն առարկայի մակերեսը և նվազեցնեն ցնցումների, տատանումների, փոշու և այլ աղտոտիչների, ինչպես նաև արտաքին միջավայրի կտրուկ տատանումների ազդեցությունը:
 - Դեֆորմացիայից խուսափելու համար փաթեթավորման նյութերը պետք է համապատասխանեն առարկայի ձևին և չափին:
 - Առարկան պետք է հեշտությամբ նույնականացվի փաթեթավորման մեջ: Սա կօգնի նվազագույնի հասցնել դրա խնամքի անհրաժեշտությունը:
- 2 Փաթեթավորման նյութերը ճիշտ ընտրելու համար կարևոր է որոշել, թե ինչ նյութերից են պատրաստված փաթեթավորվող իրերը: Օրինակ՝ թղթե առարկաներ կամ գործվածք փաթեթավորելիս համոզվեք, որ դրանք տեղադրված չեն այնպիսի տարայի մեջ, որը կարող է թթվային գոլորշիներ արձակել (օրինակ՝ թարմ փայտից կամ նրբատախտակից պատրաստված տարաներ):
 - 3 Առկա նյութերից ընտրեք ամենաորակյալը՝ առարկայի հետ անմիջական շփման մեջ դնելու համար: Որպես կանոն՝ օրգանական և անօրգանական նյութերի մեծ մասը փաթաթելու համար կարող եք օգտագործել չներկված բամբակ կամ չներկված մուսլին:
 - 4 Փաթեթավորման համար նյութեր հավաքելիս փորձեք ընտրել այնպիսիները, որ կարող են օգտագործվել տարբեր նպատակ-



ների համար: Դա կօգնի նվազեցնել ծախսերը և ապահովել ուսուցիչների արդյունավետ օգտագործումը:

- 5 Առարկաները փաթեթավորելու համար ընտրեք տուփեր, որոնք ունեն կափարիչներ և բավականաչափ ամուր են, որպեսզի տեղադրվեն այլ տուփերի տակ:
- 6 Եթե ստիպված եք դիմել օգտագործված տուփերի կամ տարաների օգնությանը, ապա համոզվեք, որ դրանք մաքուր են և բանջարեղենի մնացորդներ, վնասակար կամ քիմիական նյութեր չեն պարունակում:



Փայլոն փուփ, որը պատրված է բնական, չներկված բամբակով՝ մուսլինի մեջ փաթեթաված գործվածքի պահպանման համար անվտանգ միջավայր ապահովելու նպատակով, Նեպալ, 2016 թ. Լուսանկարը՝ Ապարնա Թանդոն, ICCROM.

- 1 Նույն նյութերից պատրաստված առարկաները միասին փաթեթավորեք: Օգտագործեք միջնապատեր կամ ամորտիզացնող նյութեր՝ առարկաների միջև շփումը կանխելու համար:
- 2 Մի դրեք թեթև և ծանր առարկաները նույն տուփի մեջ, քանի որ ծանր առարկաները կարող են ընկնել թեթև առարկաների վրա, որի հետևանքով թեթև առարկաները կարող են դեֆորմացվել կամ կոտրվել:
- 3 Առարկաներն արկղի կամ տուփի մեջ տեղադրելուց հետո, դատարկ տարածությունները լցրեք ամորտիզացնող նյութերով, որոնք կանխում են առարկաների տեղաշարժը և կլանում ցնցումները:
- 4 Թղթի կամ պապիրուսի վրա գետեղված արժեքավոր փաստաթղթեր կամ արվեստի գործեր փաթեթավորելու համար օգտագործեք տափակ տուփեր: Որպես այլընտրանք՝ առարկան

կարող եք փաթաթել որակյալ թղթի կամ բամբակյա կտորների մեջ, այնուհետև առարկաները տեղադրել երկու կոշտ տակդիրների միջև:




*Համազգեստ, հանդերձանքի այլ պարագաներ և գորգ, որոնք շարված են կոշտ փակդիրների վրա, Նեպալ, 2016.
Լուսանկարը՝ Ապարնա Թանդոն, ICCROM.*

- 1 Մեկից ավելի թղթե իրեր փաթեթավորելու համար օգտագործեք լավ որակի մաքուր թղթեր՝ առարկաներն իրարից առանձնացնելու համար: Սա կօգնի նվազեցնել թանաքը կամ գույնը մի իրից մյուսը փոխանցելու ռիսկը:
- 2 Գրքի ձևն ու կառուցվածքը պահպանելու համար այն փաթաթեք որակյալ թղթի մեջ, այնուհետև գրքի կազմի դարձերեսով ներքև դրեք տարայի հատակին:
- 3 Առանց շրջանակի թղթի կամ գործվածքի վրա զետեղված մեծ արվեստի գործ փաթեթավորելու համար օգտագործեք երկարադիմացկուն պատյանի (տուբուս), ոլորեք արվեստի գործն արտաքին կողմով դեպի դուրս և դրեք պատյանի մեջ: Դրանից հետո գլանափաթեթը ծածկեք մուսլինով կամ որակյալ թղթով: Եթե երկարադիմացկուն պատյան ձեռքի տակ չկա, օգտագործեք հաստ պատերով ստվարաթղթե պատյան և պատեք այն մուսլինե գործվածքով կամ որակյալ թղթով, այնուհետև արվեստի գործը դրեք պատյանի մեջ: Համոզվեք, որ պատյանի տրամագիծը մեծ է, քանի որ դա կօգնի նվազեցնել ճմրթվելու հետևանքով առաջացած վնասի ռիսկը:
- 4 Թրծված կավից, ապակուց կամ խեցեղենից պատրաստված փխրուն առարկաները փաթեթավորեք առանձին պլաստիկ տոպրակների մեջ՝ նախքան դրանք մեկ մեծ տարայի մեջ դնելը: Օգտագործեք ամորտիզացնող նյութեր և (կամ) միջնորմներ՝ այլ

առարկաների հետ շփումը և դրա հետևանքով առաջացող վնասվածքները կանխելու համար:

- 5 Արտակարգ իրավիճակներում պատշաճ փաթեթավորում ապահովելու համար աշխատեք հոսքագծի սկզբունքով: Անձնակազմից մեկին նշանակեք փաթեթավորման համար, մյուսին՝ տարայի պատրաստման, իսկ երրորդին՝ եզակի նույնականացման համարով առարկան պիտակավորելու և պատրաստված տարայի մեջ տեղադրելու համար:
- 6 Համոզվեք, որ բոլոր տուփերն ունեն համապատասխան պիտակներ, որոնք ցույց են տալիս այդտեղ առկա իրերի քանակը և տեսակը:
- 7 Մշակութային ժառանգության առարկաներ պարունակող տուփերի հետ սխալ վարվելուց խուսափելու համար դրանք պիտակավորեք հայտնի տարբերանշաններով՝ «փխրուն», «վերև/ներքև», «վարվել զգուշությամբ», «այսպես պահել» և «պահել չոր տեղում»:



Աղբյուր՝ Թանդոն, Ա., 2016. Վտանգված մշակութային ժառանգություն. մշակութային ժառանգության հավաքածուների արտակարգ տարհանում, Փարիզ, ՅՈՒՆԵՍԿՕ, Հռոմ, ICCROM.

Մանրամասների համար սեղմեք հղումը՝ <https://perma.cc/7J4C-TJDK>

Օրգանական և անօրգանական նյութեր



Նյութերը դասակարգվում են օրգանականի և անօրգանականի: Օրգանական նյութերը ստեղծվում են բույսերի և կենդանիների կենսագործունեության ընթացքում, իսկ անօրգանական նյութերը՝ ոչ: Այլ կերպ կարելի է ասել, որ նյութերը ծագում են կենդանական, բուսական (օրգանական) և հանքային (անօրգանական) աղբյուրներից: Բացառություն են կազմում ծովային խեցիները և ատամի էմալը:

Օրգանական նյութերն են.

Մաշկ, կաշի, մազ, մետաքս, փղոսկր, կրիայի պատյան և ոսկորներ, որոնք ծագում են կենդանական աշխարհից, ինչպես նաև փայտ, փայտի մանրաթելեր (վուշ, կեղևի մանրաթելեր և բամբակ), թուղթ և ռետին, որոնք ծագում են բուսական աշխարհի կենսագործունեությունից: Պլաստմասսան սովորաբար համարվում է օրգանական նյութ:

Օրգանական նյութերի աղբյուրը բույսերն ու կենդանիներն են:

Օրգանական նյութերն ունեն հետևյալ հատկանիշները.

- դրանց քիմիական կազմը հիմնված է ածխածնի շղթաների վրա,
- տաքացնելիս այրվում են սենյակային ջերմաստիճանում,
- զգայուն են լույսի նկատմամբ,
- ենթարկվում են միկրոօրգանիզմների և միջատների վնասակար ազդեցությանը,
- փոխանակում են (կլանում և արտադրում) ջրային գոլորշին մթնոլորտի հետ:

Տարբերակվում են հետևյալ անօրգանական նյութերը.

Մետաղ, քար, ապակի, կավ, խեցիներ (խեցիներն անօրգանական նյութեր են՝ թեև ստեղծվել են կենսագործունեության ընթացքում): Անօրգանական նյութերն ունեն հետևյալ հատկանիշները.

- կազմված չեն ածխածնային շղթաներից,
- չեն այրվում շրջակա միջավայրի սովորական ջերմաստիճանում,
- սովորաբար զգայուն չեն լույսի նկատմամբ,
- չեն ենթարկվում միջատների վնասակար ազդեցությանը,
- միկրոօրգանիզմների համար չեն կարող սնունդ դառնալ:

Ընդհանուր առմամբ օրգանական նյութերը դիպչելիս ավելի տաք են, առաձգական և պակաս խիտ, քան անօրգանական նյութերը, որոնք հակված են ավելի կոշտ և փխրուն լինել: Մեզանից յուրաքանչյուրն

ունի նյութերը ճանաչելու տարիների փորձ, որը ձեռք է բերվել առօրյա կյանքում դրանց հետ շփվելու արդյունքում: Ուշադիր ուսումնասիրելով և ձեռքբերում պահելով առարկան՝ մենք սովորաբար կարողում ենք որոշել այն հիմնական նյութը, որից պատրաստված է: Յուրաքանչյուր նյութ ունի հատկությունների իրեն բնորոշ համակցություն, օրինակ՝ գույնը, փայլը, կոշտությունը (կամ ճկունությունը), կազմությունը, հոտը և քաշը, որոնք մեզ ծանոթ են:



Աղբյուր՝ McCord, M., & Stone, T. 2002. *Deterioration of Collections. Generation 2: Education and Support Materials*. ICCROM unpublished material. Rome.

Canadian Conservation Institute. 2017. *Care of Objects and Collections*. Ottawa, Minister of Public Works and Government.

Կարդալ ավելին՝ <https://perma.cc/ZDG8-Y4UU>

Ինչպե՞ս իրականացնել մշակութային ժառանգության վնասված առարկաների դասակարգում և առաջնահերթության սահմանում, եթե այդ առարկաների նշանակությունն անհայտ է, իսկ դրանց վերաբերյալ փաստաթղթերն անհասանելի են



Երբ մշակութային ժառանգության առարկայի արժեքը հնարավոր չէ որոշել գոյություն ունեցող փաստաթղթերի միջոցով, անհրաժեշտ է սահմանել չափորոշիչներ՝ մշակութային ժառանգության նյութերի և առարկաների տարիանման, կայունացման, պահեստավորման, անվտանգության ապահովման և հետագայում դրանց հետ վարվելու առաջնահերթությունները սահմանելու համար:

Նման դեպքում պետք է հաշվի առնել հետևյալը.

- **Ի՞նչ նշանակություն ունի մշակութային ժառանգությունը տեղական համայնքի համար:** Վնասված մշակութային ժառանգության խնամակալների և պահապանների հետ խորհրդակցության միջոցով փորձեք բավարարել գնահատման հետևյալ չափորոշիչները. Ի՞նչ տարիքի է առարկան, ի՞նչ նշանակություն ունի այն համայնքի հավաքական հիշողության կամ ինքնության համար:
- **Ի՞նչ տեսակի և ի՞նչ աստիճանի վնաս է հասցվել մշակութային ժառանգությանը:** Օրինակ՝ չոր և անվնաս մնացած առարկաները պետք է առաջնահերթություն ստանան թրջված և կոտրվածների նկատմամբ: Առաջին հերթին հարկավոր է փաթեթավորել և տեղափոխել անվնաս մնացած առարկաները:
- **Ինչի՞ց են պատրաստված մշակութային ժառանգության առարկաները:** Օրգանական նյութերից պատրաստվածները (թուղթ, գործվածք, փայտ, կենդանական ծագման նյութեր, օրինակ՝ ոսկորներ) պետք է առաջնահերթություն ստանան անօրգանական նյութերից պատրաստված առարկաների նկատմամբ: Անօրգանական նյութերը, օրինակ՝ քարը, խեցեղենը և մետաղը, ավելի քիչ են ենթակա հետագայում վնասվելուն, եթե դրանց պահպանության գործընթացը հետաձգվի:
- **Որո՞նք են գոյություն ունեցող ռիսկերը:** Ինչպիսի՞ ռիսկերի է ենթակա մշակութային ժառանգության առարկան, եթե մնա ներկայիս վնասված վիճակում: Արդյոք պատճառված վնասը կավելանա, եթե առարկան չպահպանվի:

- Ինչ չափեր և քաշ ունի առարկան:** Հնարավոր է, որ բավականաչափ ժամանակ կամ ռեսուրսներ չունենաք չափազանց մեծ կամ չափազանց ծանր առարկաները տեղաշարժելու համար, օրինակ՝ պատերին ամրացված խճանկարները կամ պատի չափով և շրջանակների մեջ գտնվող յուղաներկով արված նկարները: Տեղափոխեք ավելի թեթև և հեշտ տեղաշարժվող առարկաները, իսկ ծանր կամ չափազանց մեծ առարկաների անվտանգության մասին կհոգաք տեղում՝ ըստ իրադրության:



Van Balen, K. 2008. The Nara Grid: An Evaluation Scheme Based on the Nara Document on Authenticity. *APT Bulletin*, 39(2/3): 39-45. Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://perma.cc/DL8A-E32V>

Russell, R. & Winkworth, K. 2009. *Significance 2.0: A guide to assessing the significance of collections*. Canberra, Collections Council of Australia Ltd. Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://perma.cc/GJ8G-ERAN>

Australia International Council on Monuments and Sites (ICOMOS). 2013. *The Burra Charter: The Australia ICOMOS Charter for Places of Cultural Significance, 2013*. Burwood, ICOMOS. Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://perma.cc/ULL9-UY9U>

Վնասված մշակութային ժառանգության շարժական առարկաների խնամք



Մակերեսի չոր մաքրում

Երբ է տեղին մակերեսի չոր մաքրումը.

- Մակերեսի չոր մաքրումը տեղին է, երբ կեղտի կամ փոշու ծածկույթն այնքան մեծ է, որ դրա հետևանքով կարող է վնասվել առարկան կամ մոտակայքում գտնվող այլ առարկաները:
- Առարկան պետք է ամուր կառուցվածք ունենա կամ լավ ամրացված լինի: Մի մաքրեք փխրուն առարկաները կամ մասնատված բաղադրիչները: Եթե վախենում եք, որ մաքրման ընթացքում այն կկոտրվի, ապա մի փորձեք մաքրել:
- Հաշվի առեք դեկորատիվ տարրերի փխրունությունը, ինչպիսին են ներկը կամ ոսկեզօծումը: Եթե կա հավանականություն, որ մաքրման ընթացքում կարող է հեռացվել առարկայի վրա եղած բնօրինակ նյութը, վերանայեք մաքրման անհրաժեշտությունը:
- Զգույշ եղեք հնագիտական նյութերը մաքրելիս: Հնագիտական առարկաների մակերեսին կամ ներսում կարող է գիտական նշանակություն ունեցող նստվածք կամ կեղտի շերտ լինել: Չափից դուրս մաքրումից խուսափելու համար դիմեք պահպանողի կամ հնագետի օգնությանը, որպեսզի համոզվեք, որ չեք հեռացնում կարևոր գիտական տվյալները: Եթե այդպիսի մասնագետներ չկան, առարկայի մակերեսից մաքրեք միայն հեշտ հեռացվող կեղտը: Երբեք մի մաքրեք առարկայի ներսույթը:



Զարդանախշերով պատված արկղիկի մակերեսի չոր մաքրում՝ փափուկ խոզանակով: Հայիթի, 2010. Լուսանկարը՝ Ապարնա, Տանդոն, ICCROM.

Ինչպե՞ս կատարել մակերեսի չոր մաքրում

- 1 Հեշտ հեռացվող կեղտի շերտը կամ հաստ շերտով փոշին մաքրելու համար կարելի է օգտագործել փափուկ խոզանակ կամ փոշեկույ: Փոշին, մուրը, կեղտը և այլ թեթև նստվածքը կարելի է մաքրել փափուկ խոզանակի և սպունգի օգնությամբ: Եթե կարող եք օգտվել հոսանքի անխափան աղբյուրից և ձեռքի տակ HEPA գտիչով (փոշու մասնիկները կլանող բարձր արդյունավետության գտիչ) փոշեկույ ունեք, ապա այն կարող եք օգտագործել մակերեսին եղած բորբոսը կամ կեղտի շերտը հեռացնելու համար:
- 2 Փոշեկույ օգտագործելիս մանր անցքերով ցանցով կամ թանգիֆե գործվածքով ծածկեք փոշեկույի կցափողը (գլխադիրը), որպեսզի ավելի լավ վերահսկեք օդի ճնշումը և խուսափեք առարկայի որևէ մասը պատահաբար փոշեկույով քաշելուց: Եթե մաքրում եք կեղտը երկչափ առարկայից, պահեք փոշեկույը առարկայի վերին մասում (առանց դիպչելու դրան) և զգուշությամբ կեղտի շերտը խոզանակով հասցրեք դեպի կցափողը:
- 3 Օգտագործեք մուր մաքրող սպունգ՝ մուրը կամ այլ շատ մանր մասնիկներ հեռացնելու համար: Երբեք մի օգտագործեք սպունգ՝ մետաղական առարկաները մաքրելու համար: Փոխարենը օգտագործեք խոզանակ կամ նուրբ գործվածք:
- 4 Եռաչափ առարկայի մակերեսը մաքրելու համար ապահով պահեք այն, նախքան խոզանակ կամ սպունգ օգտագործելը: Եթե առարկան մեծ է, ծանր կամ անհարմար է պահել, խնդրեք ինչ-որ մեկին պահել այն կամ կայուն մակերևույթի վրա դնել:
- 5 Երկչափ առարկայի մակերեսը, օրինակ՝ թղթի կամ կտավի վրա գետեղված արվեստի գործը, մաքրելու համար դրեք առարկան մաքուր, հարթ մակերեսին, որը ծածկված է բրեզենտով կամ պլաստիկով: Խնդրեք գործընկերոջը պահել առարկան միաժամանակ վերին և ստորին անկյուններից և զգուշությամբ մաքրեք փոշին կամ կեղտը:
- 6 Կեղտի շերտը հեռացնելիս ուշադիր եղեք, որ առարկայի մակերեսը չչնչեք: Մակերեսը քերելուց խուսափելու համար ուժեղ մի սեղմեք խոզանակը և այն քսեք միայն մեկ ուղղությամբ:
- 7 Մակերեսի թեթև աղտոտվածությունը, օրինակ՝ մուրը հեռացնելու համար, մի քսեք սպունգը առարկայի մակերեսին: Թեթև սեղմեք այն մաքրվող հատվածի վրա՝ կեղտը վերացնելու համար: Եթե սպունգի մակերեսը շատ կեղտոտ է, ապա մկրատով կտրեք սպունգի կեղտոտ հատվածը և շարունակեք մաքրել մակերեսը մաքուր մասով:



Australian War Memorial. n.d. *Conservation advice: Cleaning Soot Damaged Objects*. Canberra, The Australian War Memorial.

Կարդալ ավելին՝ <https://perma.cc/Q38H-G6KT>

Canadian Conservation Institute. 2017. *Care of Objects and Collections*. Ottawa, Minister of Public Works and Government.

Կարդալ ավելին՝ <https://perma.cc/ZDG8-Y4UU>

Heritage Collections Council. 1998d. *reCollections: Caring for Collections Across Australia – Managing Collections*. Canberra, Heritage Collections Council.

Կարդալ ավելին՝ <https://perma.cc/5NAY-J562>

Scott, M. 2003. *Bushfires...Protect Your Precious Possessions*. Melbourne, University of Melbourne.

Կարդալ ավելին՝ <https://perma.cc/8KVN-5YJQ>



Մակերեսի խոնավ մաքրում

Երբ է տեղին մակերեսի խոնավ մաքրումը, և ինչ է անհրաժեշտ դրա համար:

- 1 Խոնավ մաքրումը թույլատրելի է միայն այն առարկաների դեպքում, որոնք արդեն խոնավ են և խիստ աղտոտված, օրինակ՝ պատված են ցեխով:
- 2 Մաքրումը պետք է իրականացվի պրոֆեսիոնալ կոնսերվացիայի մասնագետների կամ մշակույթի ոլորտում առաջին օգնության փորձառու մասնագետների հսկողության ներքո:
- 3 Համոզվեք, որ պատրաստել եք օժանդակ նյութեր, որոնք թույլ կտան չորացնել թաց նյութերը:
- 4 Մաքրման ընթացքում պետք է մաքուր հոսող ջուր լինի:
- 5 Համոզվեք, որ մաքրման և կեղտոտ ջուրը հեռացնելու համար բավականաչափ մեծ տարածք կա: Պահպանեք այս տարածքը չոր աշխատանքային տարածքներից՝ այլ իրերն աղտոտելուց խուսափելու համար:

Ինչպե՞ս մաքրել խոնավ իրերը

- Կողք կողքի շարք տափակ, **ոչ խորը թասեր** (տարաներ) և լցրեք մաքուր ջրով: Թասերի քանակը կախված է առարկաների աղտոտման աստիճանից և մաքրման կարիք ունեցող առարկաների քանակից: Պետք է ձեռքի տակ լինի առնվազն երեք թաս՝ իրերը ողողելու համար: Եթե իրերը շատ կեղտոտ են, ապա կրկնակի ողողման համար ավելի շատ թասեր կպահանջվեն:

- Տեղադրեք թաց առարկան անջրանցիկ հենարանի վրա, օրինակ՝ **կոշտ պլաստիկից թիթեղի** կամ **պոլիէթերից պատրաստված ցանցի** (այնպիսի իրերի համար, ինչպիսին են թուղթը, լուսանկարները և փոքր, հարթ գործվածքի կտորները): Համոզվեք, որ հենարանը մի փոքր ավելի մեծ է, քան իրը:
- Խնամքով տեղադրեք իրն առաջին թասի մեջ: Ձեռքերով խառնեք ջուրն ու զգուշորեն հեռացրեք կեղտի շերտը և այլ նստվածքները: Մի օգտագործեք խոզանակներ կամ այլ գործիքներ:
- Հանեք իրն առաջին թասից և տեղափոխեք այն մաքուր ջրով երկրորդ տարայի մեջ: Կրկնեք ողողման գործընթացը և տեղափոխեք այն երրորդ տարայի մեջ: Շարունակեք, մինչև հասնեք վերջին տարային և հեռացնեք ցեխի նստվածքը:

Լուսանկարչական նյութերի մաքրում

Սլայդներն ու նեգատիվները կարելի է լվանալ և չորացնել բացօթյա տարածքում՝ օգտագործելով վերը նկարագրված տեխնիկան: Այնուամենայնիվ, լուսանկարները պետք է մաքրվեն մասնագիտական հսկողությամբ, քանի որ դրանց որոշ տեսակները կարող են հատուկ խնամք պահանջել:



Ցեխով աղտոտված խոնավ լուսանկերներ, որոնք լվացվում են փարաներում՝ պոլիէթերից պատրաստված թաղանթի մեջ: Իփալիա, 2017. Լուսանկարը՝ ICCROM.

Գրքերի խնամք

Թաց, փակ գիրքը, որի արտաքին մասը կեղտոտ է, պետք է փակ մնա այն լվանալու ընթացքում: Ձեռքով սեղմեք գիրքը, որպեսզի ավելորդ ջուրը դուրս գա: Մի բացեք գիրքը կամ ձեռքով սեղմելիս չափազանց մեծ ճնշում մի գործադրեք:

Գործվածքի խնամք

Մի քամեք կամ ոլորեք գործվածքե իրերը՝ ավելորդ ջուրը հեռացնելու համար: Ջուրը կլանելու համար օգտագործեք հաստ սպունգ: Սպունգը դրեք թաց գործվածքի վրա և զգուշությամբ սեղմեք այն, որպեսզի ջուրը ներծծվի: Երբ սպունգը թրջվի, քամեք դույլի մեջ, այնուհետև վևացեք՝ նորից օգտագործելուց առաջ:

Մեծ չափերի առարկաների մաքրում (պահանջվում է երկու մարդ)

Եթե մաքրման ենթակա առարկան չափազանց մեծ կամ ծանր է՝ տարայում տեղադրելու համար, հնարավորության դեպքում տեղադրեք հոսող ջրի մոտ: Մեկ մարդ կարող է պահել առարկան, իսկ մյուսը ջրի բարակ շիթով կարող է վանալ այն: Եթե ձեռքի տակ ճկախողովակ կամ խողովակ չկա, սպունգը թրջեք մաքուր ջրի մեջ և քամեք այն առարկայի վրա, կամ օգտագործեք փոքր տարաներ, որպեսզի զգուշությամբ կարողանաք վանալ առարկայի մակերեսը: Լվանալուց հետո մի փոքր չորացրեք սպունգով կամ ներծծող շորով:



Department of Homeland Security Federal Emergency Management Agency. 2018. *Reclaiming Precious Heirlooms From Flood Waters*. Washington, DC, U.S. Department of Homeland Security.

Հասանելի է հղումով՝ <https://perma.cc/XY64-GPM6>

Levitan, A. 1993. Emergency Treatment for Water-Soaked Furniture and Wooden Objects. *National Parks Service Conserve O Gram*, 7(7). Washington, DC, U.S. Department of the Interior. Հասանելի է հղումով՝ <https://perma.cc/4J9T-SFVZ>

State Library of Queensland. 2014a. *Caring for your collections: Salvaging water damaged collections*. Brisbane, Queensland Government.

Հասանելի է հղումով՝ <https://perma.cc/8V9X-YFNS>

Մշակութային ժառանգության առարկաները չորացնելու մեթոդները

Ինչպե՞ս չորացնել մշակութային ժառանգության առարկաները սենյակային ջերմաստիճանում

Մշակութային ժառանգության առարկաները հաճախ պատրաստվում են բազմաբաղադրիչ նյութերով, ուստի դրանք պետք է չորացնել, հնարավորության դեպքում, վերահսկվող պայմաններում: Իրերը չորացնելու ամենահեշտ մեթոդներից մեկը բնական պայմաններում՝ սենյակային ջերմաստիճանում չորացնելն է:



Մշակութային ժառանգության առարկաները բնական պայմաններում չորացնելու պահպանում

- Գտեք զով և չոր (ոչ խոնավ) տեղ: Հնարավորության դեպքում ձեռք բերեք օդի արտանետման գործառույթով մի քանի հզոր հովհար և չորացնող սարք, որոնք կապահովեն օդի բավարար շրջանառություն և ցածր հարաբերական խոնավություն այն սենյակում, որտեղ աշխատում եք: Եթե չեք կարող ձեռք բերել օդի արտանետման գործառույթով հովհարներ (օդափոխիչներ) և չորացնող սարքեր, համոզվեք, որ սենյակը լավ օդափոխված է կամ օգտագործեք փոքր շարժական օդափոխիչներ:
- Խուսափեք չորացվող առարկաներն արևի ուղիղ ճառագայթների տակ դնելուց, որպեսզի չորացման ընթացքում իրերը չգունաթափվեն և չձևափոխվեն:
- Հնարավորության դեպքում տարածք խնայելու համար օգտագործեք չորացման էկրաններ և դարակներով սայլակներ՝ մեծաթիվ փոքր իրեր չորացնելու համար:

Ինչպես բնական պայմաններում չորացնել մշակութային ժառանգության առարկաները

Մետաղյա իրերի դեպքում

Մետաղները ենթարկվում են կորոզիայի, եթե երկար ժամանակ թաց կամ խոնավ վիճակում են մնում: Հնարավորինս արագ չորացրեք մետաղական առարկաները: Օգտագործեք փափուկ սրբիչներ և բամբակյա սավաններ՝ խոնավությունը կլանելու և չորացման ընթացքում իրերը պահպանելու համար: Անհրաժեշտության դեպքում, գործընթացը արագացնելու համար, օգտագործեք շարժական օդափոխիչ:



Մետաղյա իրերի չորացում բնական պայմաններում արտակարգ իրավիճակների սիմուլյացիայի ժամանակ, Դուբլին, 2017 թ.
Լուսանկարը՝ ICCROM և Իռլանդիայի «Կապույտ վահան» ազգային կոմիտե

Խեցեղեն և ապակեղեն

Օգտագործեք փափուկ սրբիչներ և բամբակյա սավաններ՝ խոնավությունը կլանելու, փխրուն խեցյա և ապակյա առարկաները պահպանելու համար, երբ դրանք չորանում են: Եթե օգտագործվող սրբիչները և սավաններն այլևս չեն կլանում խոնավությունը, փոխեք դրանք:

Ոսկրից և փղոսկրից պատրաստված իրեր

Օգտագործեք սպունգ՝ ոսկրից և փղոսկրից պատրաստված իրերի խոնավությունը կլանելու համար: Չորացման գործընթացը դանդաղեցնելու համար իրերը ծածկեք արհեստական մանրաթելից ցանցով կամ պոլիէթիլենային բարակ թերթերով: Ոսկրից ու փղոսկրից պատրաստված իրերը շատ արագ չորացնելու դեպքում դրանք կարող ճաքել կամ չափազանց փխրուն դառնալ:

Գործվածքից և կաշվից պատրաստված իրեր

Գործվածքից և կաշվից պատրաստված իրերը չորացնելու համար օգտագործեք ներծծող, չներկված նյութեր, օրինակ՝ ներծծող թուղթ, սպիտակ սրբիչներ կամ բամբակյա սավաններ: Չորացրեք դրանք նույն ձևով, ինչպես գտել եք՝ հարթ հորիզոնական դիրքով: Չորացնելու ընթացքում մի փորձեք փոխել իրի ձևը:

Քուսական ծագում ունեցող իրեր

Օգտագործեք ներծծող թուղթ, ինչպիսին է հաստ յուղաթուղթը, բուսական մանրաթելերից պատրաստված առարկաներից, օրինակ՝ հյուսված զամբյուղներից ավելորդ խոնավությունը հեռացնելու համար: Իրերը ծածկեք արհեստական մանրաթելից ցանցով՝ չորացման գործընթացը վերահսկելու համար: Չորացնելու ընթացքում մի փորձեք առանձնացնել առարկաների մասերը կամ փոխել առարկայի ձևը:



Ուղղահայաց և հորիզոնական դիրքով չորացվող գրքեր արգրակարգ իրավիճակների սիմուլյացիայի ժամանակ, Դուբլին, 2017 թ. Լուսանկարը՝ ICCROM և Իռլանդիայի «Կապույտ վահան» ազգային կոմիտե

Գրքեր

Եթե գիրքը թեթևակի խոնավ է և ունի կոշտ կազմ, ուղղահայաց դիրքով դրեք այն մաքուր և հարթ մակերեսի վրա ու չորացրեք օդափոխիչով:

Ամբողջովին թրջված գրքերը պետք է չորացնել հորիզոնական դիրքում: Հեռացրեք ավելորդ խոնավությունը՝ գիրքը փաթաթելով **ներծող, չներկված թղթի մեջ**: Տպագիր գրքերը չորացնելու համար ներծող թուղթ անցկացրեք գրքի մասերի միջև՝ էջերն ավելի արդյունավետ չորացնելու համար: Համոզվեք, որ միջադիրը մի փոքր ավելի մեծ է, քան գիրքը՝ խոնավությունը կլանելու համար և չի հասնում գրքի կողին: Սա կօգնի խուսափել գրքի դեֆորմացիայից: Եթե ներծող թերթերը չափազանց խոնավ են դառնում, փոխեք դրանք:

Եթե գրքի էջերը փայլուն թղթից են, ապա օգտագործեք **արհեստական մանրաթելից ցանցը**՝ որպես խոնավությունը ներծող ներդիր: Եթե գրքի կազմը ներկված է, ապա կազմի և էջերի միջև **պոլիէթիլենային ծածկույթով թուղթ** անցկացրեք՝ կանխելով կազմից ներկի բծերի ներթափանցումը էջերի վրա:

Նկարներ, թղթի վրա արվեստի գործեր և լուսանկարչական նյութեր

Հնարավորության դեպքում առանձնացրեք վնասված շրջանակները նկարներից, արվեստի գործերից և լուսանկարներից: Եթե արվեստի գործը կամ լուսանկարը սոսնձված են շրջանակի ապակուն, մի փորձեք դրանք պոկել ապակուց:

Հսկողության տակ զգուշորեն հանեք նկարները, արվեստի գործերը և լուսանկարները ենթաշրջանակներից կամ ամրակներից: Հեռացրեք այդ առարկաներն ամրակներից միայն մասնագետի հսկողության ներքո:

Չորացրեք լուսանկարները, նկարները և արվեստի գործերը՝ արտաքին մասով դեպի վեր: Օգտագործեք արհեստական մանրաթելից ցանց կամ ներծող թուղթ, որպեսզի կարողանաք պահպանել թղթի, կտավի և գործվածքի վրա գետնոված արվեստի գործերը: Եթե արվեստի գործերն ու լուսանկարներն ամրացված են ապակուն, չորացրեք դրանք հորիզոնական դիրքով՝ ապակու մասով դեպի վեր: Խուսափեք արևի ուղիղ ճառագայթներից:



Heritage Collections Council. 1998d. reCollections: Caring for Collections Across Australia – Managing Collections. Canberra, Heritage Collections Council.

Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://perma.cc/5NAY-J562>

Թրջված առարկաների սառեցում և վակուումային չորացում

Խոր սառեցումը ջրից վնասված մեծ քանակի օրգանական նյութերից պատրաստված իրերի, գրադարանների և արխիվային նյութերի վիճակի կայունացման ամենարդյունավետ միջոցն է: Խոր սառեցման ժամանակ սառույցը նյութից հեռացվում է՝ վերածվելով գոլորշու: Վակուումային խոր սառեցումն ավելի արդյունավետ է և արագացնում է չորացման գործընթացը՝ նյութից օդը և ջրային գոլորշին հեռացնելով:

Աղետից հետո օրգանական նյութերի խոր սառեցումը և ցածր ջերմաստիճանում պահպանումը թույլ կտան ժամանակ շահել՝ ֆինանսավորման աղբյուրներ գտնելու և վնասված ենթակառուցվածքները վերականգնելու համար, ինչն, իր հերթին, կնպաստի պահպանված նյութերի վերականգնմանը կայուն միջավայրում:



Խոր սառեցման ընթացքում կարող են դեֆորմացվել այն առարկաները, որոնք պատրաստված են մի քանի նյութերից, օրինակ՝ փայտից, փղոսկրից, ոսկրից և թղթից: Դեֆորմացիան առաջանում է նյութի կլանման տարբեր հատկությունների պատճառով, ինչը հաճախ հանգեցնում է անհավասար չորացման:

Ինչպես նախապատրաստել իրերը սառեցմանը

- Սառցախցիկի տարածքը կազմակերպելիս ուշադրություն դարձրեք փաթեթավորման նյութերի բնութագրերին: Այս տեղեկատվությունը կարող եք գտնել ծառայություններ մատուցող ընկերությունից: Որպես կանոն՝ կաթի, հացի կամ մրգերի համար նախատեսված խիտ ծալքավոր ամուր ստվարաթղթից կամ պլաստիկից պատրաստված արկղերը հարմար են սառցարաններում խոնավ նյութեր պահելու համար:
- Համոզվեք, որ թրջված իրերը պահեստ տեղափոխելու համար հասանելի են սառնարանային թափքով բեռնատարներ:
- Մի ցայեք և մի վացեք մեծ քանակությամբ փխրուն օրգանական նյութեր:
- Գրքերը ամուր փաթեթավորեք՝ կողով դեպի ներքև՝ գրքերի դեֆորմացիան կանխելու համար:
- Օգտագործեք պոլիէթիլենային մակերեսով թղթեր կամ պայուսակներ՝ հատուկ նշանակության նմուշներ առանձնացնելու համար, օրինակ՝ կաշվե կապերով գրքեր: Նշեք, թե խոր սառեցման ընթացքում որ իրերն են առաջնահերթ և որոնք ստուգման կարիք ունեն:



Վնաս և վիճակի վատթարացում

Australian Institute for the Conservation of Cultural Material. 2017. *Visual Glossary*. Canberra, Australian Institute for the Conservation of Cultural Material.

Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://perma.cc/4P8N-5GBP>

Canadian Conservation Institute. 2017. *Agents of Deterioration*. Ottawa, Minister of Public Works and Government Canada.

Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://perma.cc/S65F-KNA5>

Մշակութային ժառանգության հավաքածուների խնամք

Canadian Conservation Institute. 2017. *Care of Objects and Collections*. Ottawa, Minister of Public Works and Government.

Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://perma.cc/ZDG8-Y4UU>

Heritage Collections Council. 1998a. *reCollections: Caring for Collections Across Australia – Caring for Cultural Material 1*. Canberra, Heritage Collections Council.

Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://perma.cc/9DS2-DRPA>

Heritage Collections Council. 1998b. *reCollections: Caring for Collections Across Australia – Caring for Cultural Material 2*. Canberra, Heritage Collections Council.

Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://perma.cc/49CQ-QVUV>

Տարհանման նյութեր և սարքավորումներ



Կախված արտակարգ իրավիճակի տեսակից և տարհանման վայրից՝ նախքան տարածք մուտք գործելը հարկավոր է ձեռք բերել հետևյալ սարքավորումները.



Փաստաթղթավորման փուլ

- Լուսանկարչական փաստաթղթավորման համար պահեստային մարտկոցներով տեսախցիկ
- Էսքիզային տետրեր, վանդակավոր թուղթ և նոթատետրեր
- Թղթապանակ՝ թղթի սեղմակով
- Մատիտներ և տարբեր գույների ջրակայուն գրիչներ
- Չափիչ ժապավեններ
- 2 մ երկարության չափիչ ձող՝ լայնածավալ առարկաները փաստաթղթավորելու և համատեքստային լուսանկարների մասշտաբ ստեղծելու համար
- 10 սմ մասշտաբային քանոն՝ փոքր առարկաները փաստաթղթավորելու կամ խոշոր պլանով լուսանկարելու համար
- Հաստ ստվարաթուղթ և ժապավեն
- Սարժայից և բամբակից պատրաստված թել՝ պիտակները և փաթեթները կապելու համար
- Ինքնատսնձվող պիտակներ, որոնք օգտագործվում են փաթեթավորման տակդիրների վրա՝ առարկաների նույնականացման համարները գրելու համար: Նման պիտակները չպետք է փակցվեն անմիջապես առարկայի մակերեսին:

Փաթեթավորման և փոխադրման փուլ

- Չմշակված սպիտակ մուսլին կամ նուրբ բամբակյա գործվածք: Այս գործվածքները կարելի է օգտագործել որպես ամորտիզացնող նյութ կամ իրերի մեծ մասը փաթեթավորելու նպատակով: Բացի այդ՝ գործվածքի այս տեսակները մշտապես մատչելի են:
- Մաքուր լաթաթուղթ. անթթվային/չեզոք գործվածքին փոխարինող և առավել մատչելի, բամբակից և/կամ վուշից պատրաստված այս թուղթը կարող է օգտագործվել թղթից ու գործվածքից պատրաստված արվեստի գործերը փաթեթավորելու համար:

- ❑ Պոլիէթթերային թաղանթ. թափանցիկ և անգույն պլաստիկ թաղանթ, որն օգտագործվում է լուսանկարներ և այլ թղթե փաստաթղթեր պահելու համար: Սովորաբար վաճառվում է “Mylar” կամ “Melinex” անուններով:
- ❑ “Tyvek” սինթետիկ նյութ, որը պատրաստված է բարձր խտության պոլիէթիլենային մանրաթելից: Tyvek-ից կարելի է պատրաստել անջրանցիկ ծածկույթներ: Այն սովորաբար օգտագործվում է շինարարության ընթացքում շենքերը պաշտպանելու համար:
- ❑ Բրեզենտ
- ❑ Պոլիէթիլենային փրփուր. սովորաբար վաճառվում է “Ethafoam” անունով: Պոլիէթիլենային փրփուրը կարող է օգտագործվել որպես ամորտիզացնող նյութ, քանի որ այն կարելի է հեշտությամբ կտրել այնպես, որ փաթեթավորվող իրը տեղադրվի դրա մեջ՝ ցնցումները կլանելու համար:
- ❑ Պղպջակային փաթաթան. լինելով կարճաժամկետ լուծում՝ պղպջակային փաթաթանը կարող է օգտագործվել որպես ամորտիզացնող նյութ: Պետք է հիշել, որ փաթաթանի պղպջակային մակերեսը չպետք է անմիջական շփման մեջ լինի փաթեթավորվող առարկայի հետ:
- ❑ Բարձեր/բարձիկներ. սովորական բարձերն ու բարձիկները կարող են օգտագործվել փխրուն իրեր փաթեթավորելու համար:
- ❑ Սրբիչներ. սպիտակ բամբակյա սրբիչները կարող են ամորտիզացնող գործառույթ կատարել:
- ❑ Պոլիէթիլենային տոպրակներ. սննդամթերքի համար նախատեսված պոլիէթիլենային տոպրակները կարող են օգտագործվել փխրուն կամ փոքր իրեր փաթեթավորելու համար:
- ❑ Սովարաթղթե տուփեր. սովորական սովարաթղթե տուփերը կարող են օգտագործվել որպես իրերի տարաներ: Այնուամենայնիվ, նման տուփերը հնանալիս կարող են թթվային գոլորշիներ արտանետել, որոնք վտանգավոր են լինում տեղափոխվող առարկաների համար: Իրերը պաշտպանելու համար խորհուրդ է տրվում սովարաթղթե տուփի ներքին մակերեսը պատել չներկված բամբակով կամ մաքուր լաթաթղթով:
- ❑ Մրգի փայտե արկղեր. քանի որ սովորաբար նման արկղերը պատրաստված են լինում անորակ փայտից, դրանք կարող են օգտագործվել անօրգանական նյութեր տեղափոխելու համար, ինչպիսին են քարը կամ կավը: Այնուամենայնիվ, դրանք պետք է ներսից պատված լինեն թղթով կամ բամբակով: Նման արկղերի օգտագործումը, ըստ էության, կարճաժամկետ լուծում է:

- Պլաստիկ տուփեր. պլաստիկ թափանցիկ տարաներ, որոնք սովորաբար օգտագործվում են սննդամթերքի պահեստավորման համար, կարող են ծառայել որպես փխրուն կամ փոքր իրերի տարաներ:
- Պլաստիկ արկղեր. հաճախ օգտագործվում են կաթի շշեր կամ բանջարեղեն և միրգ տեղափոխելու համար: Պլաստիկ տուփերը նույնպես կարճաժամկետ լուծում են իրերը պահելու և տեղափոխելու տեսանկյունից:
- Պլաստիկ սկուտեղներ. սովորաբար օգտագործվում են թանգարաններում և արխիվներում: Պոլիէթիլենային պլաստիկից պատրաստված այս ոչ խոր սկուտեղները կարող են անվտանգ օգտագործվել՝ իրերը պահելու և տեղափոխելու համար:
- Գլանափաթեթային/պաստառի խողովակներ. լայն տրամագծով գլանափաթեթային խողովակները կարող են օգտագործվել կտավների, թղթից և գործվածքից պատրաստված արվեստի գործերի փաթեթավորման համար:
- Պալետներ. պլաստիկից կամ փայտից պալետները կարող են օգտագործվել իրերով լի արկղերը պահելու և դրանք գետնին դնելու համար: Այնուամենայնիվ, փայտե պալետներ օգտագործելիս համոզվեք, որ դրանք զերծ են միջատներից ու ծածկված են պլաստմասես թաղանթով կամ բրեզենտով, ինչը կկանխի մշակութային ժառանգության առարկաներ պարունակող տուփերի հետ անմիջական շփումը:
- Փաթեթավորման ժապավեն
- Մկրատ
- Գրասենյակային դանակներ
- Ինքնասոսնձվող կաշուն պիտակներ՝ տուփերի և պահեստավորման պիտակավորման համար

Լրացուցիչ պարագաներ

- Պարան
- Քանոններ
- Դույլեր
- Աստիճաններ
- Սայլակներ
- Ձեռնասայլակ



Փրկարարական գործողության ժամանակ անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ

Ստորև ներկայացված նյութերի և սարքավորումների ցանկերը սպա-
ռիչ չեն և ներառում են առավել մատչելի տարբերակները: Կարող եք
օգտագործել ավելի հարմար նյութեր, եթե կարողանաք գտնել դրանք
բավականաչափ քանակությամբ: Նմանապես կարող եք դիմել տե-
ղական արտադրության նյութերի օգնությանը, եթե վստահ եք, որ
կարող եք դրանք օգտագործել առանց ռիսկի այն առարկաների կամ
կառույցների համար, որոնց վիճակը կայունացման կարիք ունի:

Տարածքի անվտանգության ապահովման փուլ.

- Ազդանշանային/նախազգուշական ժապավեն՝ վտանգավոր կամ
սահմանափակ մուտք ունեցող տարածքներն առանձնացնելու հա-
մար:
- Մետաղական ցանց. ընդհանուր նշանակության կամ ամուր ցին-
կապատ ցանկապատ: Ցինկապատ ցանկապատը կարելի է օգ-
տագործել հատուկ տարածքների մուտքն արգելելու համար:
- Համընդհանուր գործածություն ունեցող անվտանգության նշան-
ներ՝ վտանգավոր կամ սահմանափակ մուտք ունեցող տարածք-
ները սահմանելու համար: Անվտանգության նշանները պետք է
լինեն խոշոր, հստակ տեսանելի և հեշտությամբ ընկալելի աշխա-
տող ողջ անձնակազմի համար:
- Ամուր կաշոյ ժապավեն. անջրանցիկ, պաշտպանիչ շերտով և
ճնշման նկատմամբ զգայուն կաշուն ժապավեն:
- Փայտե ձողեր՝ անվտանգության նշանները և նախազգուշական
ժապավենն ամրացնելու համար:
- Փայտե տախտակներ՝ գնահատման ընթացքում հատակի թուլա-
ցած հատվածներն ամրացնելու համար:
- Աստիճան՝ հեշտ խնամք պահանջող, կախված իրերին հասնելու
համար:

Փաստաթղթավորման փուլ.

- Ֆոտոփաստաթղթավորման համար պահեստային մարտկոցնե-
րով տեսախցիկ
- Էսքրիզային տետրեր, վանդակավոր թուղթ և նոթատետրեր
- Թղթի սեղմակներ
- Մատիտներ և տարբեր գույների ջրակայուն գրիչներ
- Չափիչ ժապավեն

- 2 մ երկարության չափիչ ձող՝ լայնածավալ առարկաները փաստաթղթավորելու և համատեքստային լուսանկարների համար մասշտաբ ստեղծելու համար
- 10 սմ մասշտաբային քանոն՝ փոքր առարկաները փաստաթղթավորելու կամ խոշոր պլանով լուսանկարելու համար
- Կոշտ սովարաթուղթ և կպչուն ժապավեն
- Սարժայից և բամբակից պատրաստված թել՝ պիտակները և փաթեթները կապելու համար
- Ինքնասոսնձվող պիտակներ, որոնք օգտագործվում են փաթեթավորման տակդիրների վրա՝ առարկաների նույնականացման համարները գրելու համար: Նման պիտակները չպետք է փակցվեն անմիջապես առարկայի մակերեսին:



Մշակութային ժառանգության վնասված առարկաների վիճակի կայունացման փուլ.

- Գունավոր պարան կամ լար՝ ցանց պատրաստելու համար
- Բրեզենտ
- Ինքնակպչուններ և ինքնասոսնձվող պիտակներ
- Մատիտներ և ջրակայուն մարկերներ՝ նշումների համար
- Տարբեր չափերի փափուկ խոզանակներ
- Ատամի խոզանակներ կերամիկայի և խեցեղենի մաքրման համար
- Տարբեր չափերի սպունգներ
- Մրի մաքրման սպունգներ/ջնջիչներ. սրանք կարելի է ձեռք բերել կոնսերվացիայի ոլորտում աշխատող մատակարարներից, ինչպես նաև արվեստի ու արհեստների որոշ խանութներում
- Թղթյա սրբիչներ
- ‘Ziplock’ փականով պլաստիկ տոպրակներ
- Ոչ խոր սկուտեղներ
- Արհեստական մանրաթելից կամ մետաղից պատրաստված ցանց
- Փոշեկուլ (առկայության դեպքում)
- Դույլեր
- Դարակներով սայլակներ
- Հագուստի չորացման դարակաշարեր
- Ամուր սովարաթղթե և պլաստիկ տուփեր



Մասշտաբային քանոն



Գրասենյակային դանակ



Ազդանշանային ժապավեն



Բամբակյա թել



Չներկված սպիտակ մուսլին



Չափիչ ժապավեն



Փաթեթավորման կաշոն ժապավեն



Մրի մաքրման սպունգ




Պալետ



Արհեստական մանրաթելից թաղանթ




Պղպաձակային փաթաթան



Պոլիէթիլենային լաթաթուղթ



Թղթ պարալոն



‘Tyvek’ փաթաթան



Սարժայից ժապավեն



Աստիճան




Դարակաշարերով սայլակ



Անվտանգության նշաններ



Պլաստիկ տարա



Չափիչ ձող



Գլանափաթեթային խողովակներ



Կաթի տարաների պլաստիկ արկղեր

Ինչպես ապահովել ժամանակավոր ապաստան՝ մշակութային ժառանգության անպաշտպան առարկաների և հավաքածուների համար




- 1 Չափեր բեկորների կույտի բարձրությունը և լայնությունը
- 2 Ձեռք բերեք անջրանցիկ ծածկոց, օրինակ՝ բրեզենտ, որը պետք է լինի ավելի մեծ, քան բեկորների կույտը: Եթե ամբողջ մակերեսը փակելու համար չեք կարող գտնել բավականաչափ մեծ ծածկոց, իրար միացրեք բեկորները՝ օգտագործելով ամուր կաշուն ժապավեն՝ ցանկալի չափի ծածկոց ստանալու համար:
- 3 Ծածկեք բեկորների կույտը և ամրացրեք այն գետնին վրանների սեպերով կամ ծանր առարկաներով: Որպես այլընտրանք, եթե ձեռքի տակ նման միջոցներ կան, կարող եք պարզապես վրան տեղադրել՝ դրանով բոլոր կողմերից ծածկելով բեկորների կույտը:

Ինչպես ժամանակավոր շրջանակ պատրաստել ծածկոցի համար

Ստորև ժամանակավոր շրջանակի պատրաստման մի քանի խորհուրդ է շարադրված: Մի փորձեք շրջանակը պատրաստել առանց ինժեների օգնության՝ հատկապես այն դեպքում, եթե շրջանակը ծանր տանիքի համար է:


Ինչպես ամրապնդել շրջանակի կառուցվածքը.

Ամուր լինելու համար շրջանակը պետք է բաղկացած լինի ուղղահայաց սյուներից, հորիզոնական հեծաններից և անկյունագծային ամրաններից: Ուղղանկյունաձև շրջանակները հորիզոնական բեռների ազդեցության տակ արագորեն դեֆորմացվում են: Եռանկյունաձև շրջանակները շատ ավելի դիմացկուն են: Ուղղանկյունաձև շրջանակի ամրապնդումն անկյունագծային տարրերով կարող է կանխել հետագա դեֆորմացիան:




Նկարը՝ Է. Կրեպ

Շրջանակի կառուցվածքն ամրացնելու համար կարող եք օգտագործել փայտ, բամբուկ կամ մետաղալար՝ դնելով այն անկյունագծով: Եթե օգտագործում եք մետաղալար, ապա այն պետք է ոլորել փայտի կտորի կամ մեծ մեխի վրա՝ դրա առաձգականությունը մեծացնելու համար: Բացի այդ՝ մետաղալար օգտագործելիս անհրաժեշտ է ամրացնել երկու անկյունագծերը (մինչդեռ բամբուկ կամ փայտ օգտագործելիս մեկ անկյունագիծը բավարար է ողջ շրջանակն ամրացնելու համար):



Նկարի աղապրացիա.՝ Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիա (ԿԽՄԿ). ԿԽՄԿ ապաստարանի գործնական ուղեցույց. Ժնև, ԿԽՄԿ

Եթե օգտագործում եք մետաղալարից կոշտ տարր, մեկ անկյունագծային տարրը բավարար կլինի շրջանակն ամրացնելու համար: Եթե մետաղալար եք օգտագործում, համոզվեք, որ անկյունագծի երկու կողմերն էլ ամրացրել եք: Կարող եք ամրացնել շրջանակն անկյուններում՝ ավելի փոքր փայտե կտորներ օգտագործելու համար:



Նկարը՝ Է. Կրեյր

Ինչպես միացնել փայտե տարրերը.

- Փայտե տարրերն ամենից հաճախ միացվում են մեխերով, գամերով, պտուտակներով կամ հեղույսներով: Միացման տեղերն ամրացնելու համար կարող են օգտագործվել մետաղական ժապավեն կամ թիթեղներ (մետաղական թիթեղներ, որոնք մեխված են միացման տեղի երկու կողմերում):


- Մեկ մեխը չի կանխի միացման տեղի դեֆորմացիան: Ավելի լավ է օգտագործել երկու մեխ անկյան տակ, քանի որ անկյունը թույլ չի տալիս, որ մեխերը հեշտությամբ դուրս գան:
- Ուժեղ կոռոզիայի պայմաններում (օրինակ՝ օվկիանոսի մոտ եղած վայրերում) տարրերը միացնելու համար օգտագործեք գամեր կամ սեպեր: Անհրաժեշտության դեպքում դիմեք ատաղձագործի օգնությանը:
- Կարելի է օգտագործել նաև ծանր ցինկապատ մետաղալար կամ պարան: Բնական մանրաթելեր օգտագործելուց առաջ դրանք թրջեք, քանի որ չորանալուց հետո կարող են կծկվել և ձգել կապը:

Ինչպես միացնել բամբուկե տարրերը.

- Եթե շրջանակը պատրաստում եք բամբուկից, մի օգտագործեք մեխեր: Օգտագործեք ամուր ցինկապատ մետաղալար կամ պարան: Բնական մանրաթելերն օգտագործելուց առաջ թրջեք, քանի որ չորանալուց հետո դրանք կարող են կծկվել և ձգել կապը:
- Միացումները պետք է տեղադրվեն երկու հանգույցների միջև, քանի որ բամբուկը հեշտությամբ բաժանվում է ծայրերում:

Ինչպես ամրացնել շրջանակը գետնին.

- Կարող եք ամրաձողով ամրացնել շրջանակը գետնին: Ամրաձողի կայունությունն ապահովվում է օգտագործվող պարանների ամրությամբ և առաձգականությամբ, ինչպես նաև անշարժ տարրով, որին ամրացված է շրջանակը, օրինակ՝ ցցի, ծառի կամ ձողի միջոցով:
- Կարող եք օգտագործել կրկնակի հանգույց՝ ամրաձողի վրա պարանը ամրացնելու համար (ինչպես պատկերված է ստորև ներկայացված ձախ և կենտրոնական նկարներներում), կամ շարժական օղակ՝ այն ամրաձողին ամրացնելու համար (ներքևի անկյան աջ նկարը):




Նկարի աղապարացիա. Կարմիր էսաջի և Կարմիր Մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիա (ԿԻՄԿ). ԿԻՄԿ ապաստարանի գործնական ուղեցույց. Ժնև, ԿԻՄԿ

- Նախքան շրջանակը ամրացնելը համոզվեք, որ շրջապատող բաղադրիչները ևս ամուր են:
- Եթե հնարավոր է փորել հողը, կարող եք օգտագործել սեպ կամ փորած մասում տեղադրել դիմադրություն ցույց տվող ցանկացած առարկա և կապել այն գետնից դուրս ցցված պարանով կամ մետաղալարով:
- Եթե հողը հնարավոր չէ փորել, ապա ցանկացած բավականաչափ ծանր առարկա կարող է օգտագործվել պարաններն ամրացնելու համար, օրինակ՝ ավազի պարկերը կամ հողով, ավազով, քարերով, կրաքարով կամ ցեմենտով լցված դույլերը:

Ինչպես փայտե սյունն ամրացնել գետնին

- Փայտե սյունը կարող եք ամրացնել գետնին՝ մոտ 50 սմ խորությամբ փոս փորելով: Թաղեք սյան մի ծայրը հողի մեջ՝ շուրջը մոտ 10 սմ հող լցնելով: Կրկնեք այնքան, մինչև փոսն ամբողջությամբ լցվի, և սյունը ամուր կանգնի: Հնարավորության դեպքում 5% կրաքար կամ ցեմենտ ավելացրեք հողին, որն օգտագործում եք փոսը լցնելու համար:
- Փայտե սյուների կայունությունը բարձրացնելու համար կարող են օգտագործվել սեպեր: Կարող եք նաև փայտե խարիսխ ավելացնել դրա հիմքին՝ մակերեսը մեծացնելու և ծանրության կենտրոնը նվազեցնելու համար:
- Եթե հնարավոր չէ փորել, կարող եք ավազի պարկեր դնել սյան շուրջը կամ տեղադրել սյունը հողով, ավազով, քարերով, կրաքարով կամ ցեմենտով լցված մեծ դույլերի մեջ:




Նկարի աղապարացիա՝ Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիա (ԿԻՄԿ). ԿԻՄԿ ապաստարանի գործնական ուղեցույց. ԺՆՆ, ԿԻՄԿ

Ինչպես ամրացնել բրեզենտը

- Եթե բրեզենտի վրա հատուկ օղակներ չկան, և ցանկանում եք այն պարանով ամրացնել փայտե ձողին կամ սեպին, բրեզենտի մի

ծայրով հանգույց պատրաստեք: Անցկացրեք պարանը հանգույցի միջով: Որպես այլընտրանք՝ փոքր քար փաթաթեք բրեզենտի արտաքին եզրին: Պարանը կապեք դրա շուրջը և հանգույց պատրաստեք: Որպեսզի մեխերը խփելիս բրեզենտը չպատռվի, մեխերը խփեք փայտե համաչափ փոքրիկ կտորի, պլաստիկ օղակի կամ շշի կափարիչի վրայից: Առանց պաշտպանության մեխված բրեզենտը արագ կպատռվի՝ հատկապես, եթե այն անորակ է:

- Բրեզենտը պետք է ամուր ձգվի թմբուկի կաշվի պես 30 աստիճանից ոչ ավելի թեքությամբ շրջանակի վրա՝ ջրի կուտակումից խուսափելու համար: Ուշադիր եղեք և համոզվեք, որ ջուրը չի հոսում բրեզենտի անհարթ հատվածներով՝ հատկապես, եթե օգտագործում եք խոշոր բրեզենտներ, քանի որ դրանք կարող են մեծ քանակությամբ ջուր հավաքել:
- Կարող եք ամրացնել բրեզենտը՝ խրամատ փորելով, բրեզենտի ծայրը մտցնելով դրա մեջ և հողով ծածկելով: Կարող եք նաև քարերը փաթաթել բրեզենտի կտորով, նախքան այն հողով ծածկելը:



Հարկավոր է բռունցքի չափից մեծ քարեր ընտրել, որպեսզի բրեզենտը չպատռվի:


- Եթե ցանկանում եք բրեզենտի կտորները կարելով միացնել, ծալեք բրեզենտն այնպես, որ թելն անցնի պլաստիկ թաղանթի շերտի միջով:
- Համոզվեք, որ բրեզենտը չի շփվում պահպանվող առարկայի նախշազարդ մակերեսների հետ՝ առանց դրանց միջև պաշտպանիչ շերտի: Նկատի ունեցեք, որ ուժեղ քամու դեպքում վատ ամրացված բրեզենտը կարող է պոկվել: Այս դեպքում այն դադարում է լինել արդյունավետ պաշտպանության միջոց և կարող է քերծել արտաքին դեկորատիվ մակերեսները:



Մի խոչընդոտեք ներքին տարածքների օդափոխությանը դրանց պաշտպանության ընթացքում: Նախևառաջ օդափոխության բացակայությունը կարող է բացասաբար ազդել պաշտպանվող իրերի վրա, հատկապես եթե դրանք թաց են: Բացի այդ՝ համապատասխան օդափոխիչները կնվազեցնեն ծածկույթի պոկվելու ռիսկը: Կարևոր է օդափոխիչները տեղադրել անմիջապես ժամանակավոր տանիքի տակ՝ պատերի և ժամանակավոր տանիքի միջև թողնելով 10 սանտիմետրանոց բացվածք:

Ինչպես ամրացնել ծալքավոր ցինկապատ երկաթե (CGI) և պողպատե (CGS) թիթեղները

Ծալքավոր ցինկապատ երկաթե (CGI) կամ պողպատե (CGS) թիթեղներով ջրամեկուսացում ապահովելու համար անհրաժեշտ է երկու թիթեղը դնել երկու ծալքերի վրա՝ լայնակի ուղղությամբ և առնվազն 15 սմ երկայնական ուղղությամբ, ու թիթեղները միմյանց ամրացնել մեծ գլխիկներով մեխերով ծալքի վերին հատվածում:



Նկարի աղապարացիա. Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիա (ԿԽՄԿ). ԿԽՄԿ ապաստարանի գործնական ուղեցույց. Ժնև, ԿԽՄԿ



International Federation of Red Cross and Red Crescent Societies (IFRC). n.d. *The IFRC Shelter Kit*. Geneva, IFRC.

Հասանելի է հղումով՝ <https://perma.cc/R5Z-DEU3>

International Federation of Red Cross and Red Crescent Societies (IFRC). 2015. *IFRC bamboo frame for emergency shelters and emergency roofs: technical sheets*. Geneva, IFRC.

Հասանելի է հղումով՝ <https://perma.cc/S7YY-78MG>

Ինչպես կառուցել պարզ փայտե հենարաններ. քայլ առ քայլ ուղեցույց

Ներկայացվող տեքստը տարբեր տեսակի փայտե հենարաններ կառուցելու ընդհանուր խորհուրդներ է պարունակում՝ մշակութային ժառանգության առարկաների վիճակը շտապ կայունացնելու համար: Այնուամենայնիվ, հենարանների ամենահարմար տեսակն ընտրելու համար խորհրդակցեք նախագծող ճարտարագետի հետ, որը ծանոթ է տեղական մշակութային ժառանգության վայրերին և օգտագործված շինանյութերին:

Մի մոռացեք, որ երբ կառույցը փլուզման վտանգի տակ է, արտակարգ իրավիճակներում հենարանները կառուցված տարրերին աջակցելու միջոցներ են:


Արտակարգ իրավիճակներում ամրացման աշխատանքների և կայունացման այլ գործողությունների հետ կապված աշխատանքային գործընթացի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար՝ [տես Ձեռնարկը, էջ 108-115](#):

1. Սեպեր

Սեպերն օգտագործվում են կայունացվող կառույցին փայտե հենարանը լավ ամրացնելու համար: Դրանք օգնում են փակել փայտե հենարանի մասերի միջև եղած փոքր բացերը և դյուրին դարձնել հենարանի կառուցումը: Ստորև ներկայացված է սեպերի օգտագործման քայլ առ քայլ ուղեցույցը:


Անհրաժեշտ գործիքներ՝ սղոց, մուրճ:

Քայլ 1: Փայտի կտորը կտրեք և երկու սեպ պատրաստեք:




Նկարը՝ Նելսոն Վիլա Պոուկա

Քայլ 2: Տեղադրեք առաջին սեպն այն բացվածքի մեջ, որը պետք է փակել, այնուհետև օգտագործեք մեխեր, որպեսզի սեպը չսահի: Տեղադրեք երկրորդ սեպը բացվածքի մեջ և մուրճով խփեք այնպես, որ այն ամուր մտնի մնացած փայտե մասերի միջև:



Նկարը՝ Նելսոն Վիլա Պոուկա

Քայլ 3. Ամրացրեք երկրորդ սեպը մեխերով:



Նկարը՝ Նելսոն Վիլա Պոուկա




Մեխերով ամրացված միացումներ

Փորձեք մեխերի միջև պահպանել մոտ 3 սմ նվազագույն հեռավորություն, իսկ մեխերի և փայտանյութի վերջին շերտի միջև՝ 5 սմ խորություն: Կոռոզիայից խուսափելու համար մեխերը պետք է լաքապատվել:

1 Պարզ ուղղահայաց հենարան. տարբերակ 1

Անհրաժեշտ գործիքներ՝ սղոց, մուրճ


Ստորև ներկայացված «T»-աձև հենարանը ժամանակավոր է, որն արագ է տեղադրվում, բայց կարող է դառնալ անկայուն, եթե լավ կենտրոնացված չէ ծանրության տակ: Այս հենարանը պետք է կառուցել ժամանակավոր օգտագործման ակնկալիքով՝ նախքան ավելի կայուն հենարանների կառուցումը, ինչպիսին է, օրինակ, կրկնակի «T»-աձև հենարանը:



Նկարը՝ Նելսոն Վիլյա Պոուկա


Քայլ 1: Նախապատրաստեք փայտե բոլոր դետալները և մաքրեք այն տարածքը, որտեղ պատրաստվում էք դնել հենարանի հորիզոնական հենքը:

Քայլ 2: Մեխերով ամրացրեք փայտե հորիզոնական ձողը և սյունը՝ օգտագործելով երկու լեզվակ, յուրաքանչյուր կողմից՝ մեկական:




Նկարը՝ Նելսոն Վիլա Պոուկա

Քայլ 3: Տեղադրեք հենարանի հորիզոնական հենքը գետնին (եթե հողը շատ փափուկ է, հարկավոր է հենարանը տեղադրելուց առաջ գետնին տախտակներ դնել)՝ ամրացվող սյան տակ և վրան դրեք առաջին սեպը: Մեխով ամրացրեք սեպը հենարանին: Տեղադրեք երկրորդ սեպը առաջինի վրա, որից հետո երկրորդ սեպի վրա տեղադրեք փայտե ձողը: Մուրճով հարվածելով՝ երկրորդ սեպն այնպես հարմարեցրեք, որպեսզի ամրացվող սյունը և հորիզոնական ձողը ամուր կպչեն իրար: Եվս մեկ մեխով ամրացրեք այնպես, որպեսզի երկրորդ սեպը չսահի:



Նկարը՝ Նելսոն Վիլա Պոուկա


Քայլ 4. Ավարտեք՝ լեզվակը տեղադրելով՝ հենարանը և սյունն իրար ամրացնելու համար:



Նկարը՝ Նելսոն Վիլա Պոուկա

2 Պարզ ուղղահայաց հենարան. տարբերակ 2


Ստորև ներկայացված ուղղահայաց հենարանը նույնպես ժամանակավոր միջոց է, որը կարող է արագ տեղադրվել, բայց ծանրության տակ կենտրոնացվածության բացակայության դեպքում, կարող է դառնալ անկայուն: Նման հենարանը կարելի է կառուցել՝ նախքան ավելի կայուն հենարաններ տեղադրելը:



Նկարը՝ Նելսոն Վիլյա Պոուկա


Քայլ 1. Նախապատրաստեք փայտե բոլոր դետալները և մաքրեք այն տարածքը, որտեղ պատրաստվում էք տեղադրել հենարանի հորիզոնական հենքը:

Քայլ 2. Մեխերով ամրացրեք միմյանց հորիզոնական ձողը և ուղղահայաց սյունը: Մեխերը երկու անկյունագծային ձողեր հորիզոնական ձողին և ուղղահայաց սյանը՝ յուրաքանչյուր կողմից մեկական:




Նկարը՝ Նելսոն Վիլա Պոուկա

Քայլ 3: Տեղադրեք փայտե հենարանի հորիզոնական հենքը գետնին (եթե հողը շատ փափուկ է, հարկավոր է հենարանը տեղադրելուց առաջ գետնին տախտակներ դնել) ամրացվող սյան տակ և վրան դրեք առաջին սեպը: Մեխով ամրացրեք սեպը հենարանին: Տեղադրեք երկրորդ սեպը առաջինի վրա, որից հետո երկրորդ սեպի վրա տեղադրեք փայտե ձողը: Մուրճով հարվածելով՝ երկրորդ սեպն այնպես հարմարեցրեք, որ ամրացվող սյունը և հորիզոնական ձողն ամուր կպնեն իրար: Մուրճով մեխեք, որպեսզի երկրորդ սեպը չսահի:




Նկարը՝ Նելսոն Վիլա Պոուկա

Քայլ 4. Ավարտեք հենարանի տեղադրումը՝ անկյունագծով մեխված երկու ձողերով՝ ուղղահայց սյունը և հենարանի հորիզոնական հենքն միմյանց ամրացնելով:



Նկարը՝ Նելսոն Վիլա Պոուկա

Կախված արտակարգ իրավիճակի բնույթից, վնասի տեսակից և առկա նյութերից՝ կարելի է օգտագործել ուղղահայաց հենարանների այլ տեսակներ ևս: Ստորև նկարում ներկայացված է հնարավոր տարբերակներից մեկը:



Նկարը՝ Նելսոն Վիլա Պոուկա


3 Անկյունագծով տեղադրվող հենարան

Ներքևի ձախ կողմում ներկայացվածը հորիզոնական հենարան է. այն ժամանակավոր է և օգտագործվում է պատի հիմքի մոտ կուտակված բեկորներն անվտանգ հեռացնելու համար:


Հենարանի հորիզոնական հենքը պետք է ամրացվի պատին հորատիչով (եթե պատը քարից է) կամ մեխերով (եթե պատը փայտից է): Եթե պատը նախշազարդ է, ապա համոզվեք, որ մեկուսիչ շերտ ունեք ձեռքի տակ, [ինչպես նշված է Ձեռնարկի էջ 114-ում](#):

Հենարանի վահանակը պարտադիր չէ ամրացնել, եթե վահանակի վերին մասը կարող է հենվել պատի ելուստին՝ առանց դրա հետ շփվելու:

Եթե պատի հիմքի մոտ խոչընդոտներ չկան, ապա կարելի է օգտագործել նաև [էջ 87-ում ներկայացված անկյունագծով տեղադրվող հենարանը](#):



Նկարը՝ Նելսոն Վիլյա Պոուկա




Նկարը՝ Նելսոն Վիլա Պոուկա

Անհրաժեշտ գործիքներ՝ մուրճ, սղոց և պտուտակադարձիչ, եթե պատրաստվում եք անկյունագծով տեղադրվող հենարանն ամրացնել պատին պտուտակադարձիչի միջոցով ամրացվող անկերներով (խարիսխներ) կամ մեկ անկերին ամրացվող գամերով:

4 Պատուհանի կամ դռան հենարան. տարբերակ 1

Այս տեսակի հենարանն օգտագործվում է բացվածքները կայունացնելու համար՝ այն դեպքերում, երբ դռան կամ պատուհանի շրջանակները վնասված են:

Անհրաժեշտ գործիքներ՝ սղոց, մուրճ



Նկարը՝ Նելսոն Վիլա Պոուկա

Քայլ 1. Նախապատրաստեք փայտե բոլոր մասերը և մաքրեք բացվածքի շրջանակը, ուր պատրաստվում էք հենարան տեղադրել:

Քայլ 2. Տեղադրեք հորիզոնական հենատախտակը՝ սեպերն ամրացնելով մի ծայրից և միաժամանակ խփելով դրանց վրա, մինչև հենատախտակն ամուր լինի: Այս գործողության նպատակը հենատախտակը հնարավորինս հարթ դարձնելն է: Անհրաժեշտության դեպքում հենատախտակի տակ կարելի է բարակ թիթեղներ դնել, որպեսզի այն հարթ լինի:

Քայլ 3. Տեղադրեք հորիզոնական ձողը մի շարք սեպերով հորիզոնական հենատախտակի հակառակ ծայրում և միաժամանակ հարվածեք, մինչև հորիզոնական ձողն ամրանա: Հորիզոնական ձողը պետք է հնարավորինս հավասարեցվի: Այս նպատակով, անհրաժեշտության դեպքում, կարող եք հորիզոնական ձողի վերևում թիթեղներ օգտագործել:

Քայլ 4. Տեղադրեք ձախ սյունը սեպի տակ՝ հորիզոնական ձողի կողմից և բացվածքի հակառակ կողմում՝ սեպերը տեղադրելով սյան և հորիզոնական հենատախտակի միջև:

Քայլ 5. Տեղադրեք աջ սյունը՝ մի քանի սեպեր խփելով սյան և հորիզոնական հենատախտակի միջև:

Քայլ 6. Տեղադրեք միջնամասի սյունը՝ մի քանի սեպ խփելով սյան և հորիզոնական հենատախտակի միջև:


Քայլ 7. Համոզվեք, որ սեպերն ամուր են տեղադրված:

Քայլ 8. Վերջում անկյունագծերով ամրացրեք ևս երկու տախտակ մեխելով:

5 Պատուհանի կամ դռան հենարան. տարբերակներ 2 և 3

Այս տեսակի հենարաններն օգտագործվում են բացվածքները կայունացնելու համար՝ այն դեպքում, երբ դռան կամ պատուհանի շրջանակները վնասված են, և անհրաժեշտ է ներս մտնել:

Անհրաժեշտ գործիքներ՝ սղոց, մուրճ



Նկարը՝ Նելսոն Վիլա Պոուկա



Խորհուրդներ հենարան կառուցելու վերաբերյալ

- Օգտագործեք փայտ, որի լայնությունն առնվազն 25 անգամ փոքր է երկարությունից, որպեսզի այն դիմացկուն լինի սեղմվելիս և ավելի քիչ ենթարկվի դեֆորմացիայի:
- Սեպերը նույնպես կարևոր են. օգտագործեք առանց հանգույցների, թերությունների և բավականաչափ չոր փայտ՝ դեֆորմացիայից խուսափելու համար:
- Համոզվեք, որ տախտակն ամրացրել եք պատին, որպեսզի կանխեք հենարանի սայթաքումը: Պետք չէ անտեսել հենարանը պատին ամրացնելու քայլը՝ հույս դնելով միայն դետալների շփման վրա:
- Պատի հենարանները պետք է հնարավորինս բարձր տեղադրված լինեն վնասված պատի երկայնքով և, հնարավորության դեպքում, հասնեն գետնին:
- Կարող եք ավագի պարկեր տեղադրել պատի և հենատախտակի միջև՝ երկու մակերևույթների շփումը բարելավելու համար, օրինակ, եթե պատի մակերեսը հարթ չէ:
- Հնարավորության դեպքում խուսափեք դեկորատիվ պատը որպես հենարան օգտագործելուց: Եթե դա հնարավոր չէ: Պատի և հենարանի միջև կարելի է մուսլինից կտոր կամ պորոլոնից (սպունգ) նրբաթիթեղ դնել: Հենարանի չափը որոշելիս պետք է նկատի ունենալ, որ հարկավոր է այն ամրացնել պատին:
- Պատի հիմքում տեղ-տեղ եղած փլուզման դեպքում ավագի պարկերը կարող են օգտագործվել անցքը փակելու և ժամանակավոր հենարան ապահովելու համար:



Department of Homeland Security. 2011. *Field guide for Building Stabilization and Shoring Techniques*. Washington, DC, U.S. Department of Homeland Security.

Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://perma.cc/ZN3R-NRWU>

Corpo Nazionale dei Vigili del Fuoco – Università degli Studi di Udine. 2011. *Manuale Opere Provvisorie, l'intervento tecnico urgente in emergenza sismica*. Rome, Ministero dell'Interno. Հասանելի է (խալերեն) հետևյալ հղումով՝ <https://perma.cc/AP8A-22L2>

Grimaz, S., Cavriai, M., Mannino, E., Munaro, L., Bellizzi, M., Bolognese, C., Caciolai, M., D'Odorico, A., Maiolo, A., Ponticelli, L., Barazza, F., Malisan, P. & Moretti, A. 2010. *Vademecum, STOP, Shoring Templates and Operating Procedures for the Support of Buildings damaged by Earthquakes*. Rome, Ministry of Interior – Italian Fire Service.

Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://perma.cc/62JX-UJLP>

United States Army Corps of Engineers. 2013. *Urban Search & Rescue Shoring Operations Guide*. Washington, DC, United States Department of Defence.

Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://perma.cc/H6NA-WBRY>





Վնասված անշարժ մշակութային ժառանգությունը տեղում չորացնելու խորհուրդներ

- Մակերեսները մաքրելիս խուսափեք բարձր ճնշման ջուր օգտագործելուց: Ջրի մեծ ճնշումը կարող է լրացուցիչ վնաս հասցնել փխրուն նյութերին և վնասակար միկրոօրգանիզմներ տարածել: Մակերեսներից կեղտն ու բեկորները լվանալու համար օգտագործեք պլաստիկ գործիքներ և բարակ շիթով հոսող մաքուր ջուր: Ի տարբերություն մետաղական գործիքների՝ պլաստիկ գործիքներն ավելի քիչ վնաս են պատճառում:
- Չորացման գործընթացն արագացնելու համար կարող են օգտագործվել մեխանիկական օդափոխիչներ, բայց դրանք չեն փոխարինի բաց դռներին և պատուհաններին, որոնք անհրաժեշտ են շենքում խոնավության դեմ պայքարելու համար:
- Մի օգտագործեք գազի տաքացուցիչներ, քանի որ դրանք ջրի գոլորշի են արձակում:
- Հիշեք, որ 18°C-ից բարձր ջերմաստիճանը կարող է նպաստել բորբոսի աճին:
- Խուսափեք հին շենքերում ագրեսիվ չորացուցիչների օգտագործումից: Թե՛ սառեցնող, թե՛ խոնավությունը կլանող չորացուցիչների աշխատանքը կարելի է կարգավորել խոնավացուցչի միջոցով: Այս կարգավորիչների ճիշտ օգտագործման դեպքում կարելի է ապահովել չորացման մեղմ պայմաններ:

Նախշազարդ մակերեսների չորացման պայմանները

- Նախքան նախշազարդ մակերեսներին դիպչելը՝ խորհրդատվություն խնդրեք կամ ապահովեք որմնանկարների/խճանկարների պահպանման որակավորված մասնագետի ներկայությունը:
- Փորձեք ջուրը հեռացնել նախշազարդ մակերեսից: Չգուշացեք անթափանց հատակներից, որոնք թույլ չեն տալիս ջրի արտահոսքը հատակով և արագացնում են դրա ներթափանցումը պատի մեջ:
- Եթե պատը զարդարված է միայն մի կողմից, փորձեք ջուրը հեռացնել չզարդարված կողմով: Դանդաղեցրեք չորացումը նախշազարդ կողմում՝ օգտագործելով բրեզենտ: Կանխեք նախշազարդ մակերեսի հետ անմիջական շփումը՝ օգտագործելով չներկված մուսլին կամ սպիտակ բամբակյա սավան:
- Եթե նկատում եք, որ մակերևույթի վրա նուրբ սպիտակ փոշի է առաջացել, ապա հաճախ դա աղի միգրացիայի նշան է: Ֆիքսեք այս տեղը և խնդրեք պահպանման մասնագետին օգնել ձեզ հեռացնել այն: Մակերևույթի վրա բյուրեղացող աղերը կարելի է հեռացնել չոր խոզանակով, քանի որ այն թույլ չի տալիս, որպեսզի աղերը նորից լուծվեն ու ներծծվեն պատի մեջ:

Արտակարգ իրավիճակներում կառույցների վիճակի կայունացման և դեկորատիվ տարրերի պաշտպանության համար անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ



- Փայտե սյուներ կամ բամբուկ՝ ժամանակավոր շրջանակ պատարաստելու համար
- Բրեզենտ. հաստ, հյուսված գործվաքից պատրաստված և ծածկույթով պատված բրեզենտն ավելի լավ է պահվում դրսում: Հնարավորության դեպքում օգտագործեք սպիտակ բրեզենտ՝ ավելորդ ջերմության կուտակումը կանխելու համար, և ամրացնող ժապավեններ ունեցող բրեզենտ՝ պատռվածքներից խուսափելու համար:
- Ծալքավոր ցինկապատ երկաթից (CGI) կամ պողպատից (CGS) թիթեղներ. զգուշացեք ցածրորակ CGI/CGS թիթեղներ օգտագործելուց, քանի որ դրանք շատ արագ փչանում են: Առնվազն 0,3 մմ հաստությամբ թիթեղները սովորաբար ծառայում են մի քանի տարի:
- Մեխեր, հատկապես մեծ գլխիկով մեխեր՝ CGI/CGS թիթեղներն ամրացնելու համար:
- Մուրճեր, սղոցներ, պտուտակներ, պտուտակահաններ, փայտի սայրեր (դուր) և հեղույսներ:
- Չափիչ ժապավեններ, կապարալարեր և հարթաչափ:
- Մետաղալար. ամուր ցինկապատ ցանկապատի մետաղալարը կարող է օգտագործվել բամբուկը և բրեզենտը, ինչպես նաև շրջանակն ամրացնելու համար:
- Մետաղական ժապավեն կամ մետաղական թիթեղներ՝ փայտե դետալները միմյանց ամրացնելու համար:
- Բնական մանրաթելից պատրաստված պարան՝ բամբուկն ու բրեզենտը կամ շրջանակն ամրացնելու համար:
- Ձողեր կամ ցցեր՝ շրջանակ կամ բրեզենտ ամրացնելու համար:
- Քարեր և ավազի պարկեր՝ շրջանակ կամ բրեզենտ ամրացնելու համար:
- Բահեր և քլունգներ. եթե անհրաժեշտ է՝ փոս փորել շրջանակը կամ բրեզենտը ամրացնելու համար:
- Դույլեր՝ սյուներն ամրացնելու համար, եթե չեք կարող փոս փորել:
- Ցեմենտ կամ կրաքար. կօզնեն հուսալիորեն ամրացնել սյուները:
- Փայտե սեպեր. կօզնեն կայուն կանգնեցնել սյուները:
- Պլաստիկ օղակներ, շշերի կափարիչներ և փայտի փոքր կտորներ՝ բրեզենտը շրջանակին ամրացնելու համար:
- Կարելու գործիքներ և նյութեր (թել ու ասեղներ) կամ ամուր կաչուն ժապավեն (անջրանցիկ, պաշտպանիչ շերտով պատված և ճնշման նկատմամբ զգայուն)՝ բրեզենտի տարբեր կտորները միմյանց կարելու համար:

Խոնավ շինությունները չորացնելու համար անհրաժեշտ նյութեր և սարքեր

- Մետաղական ցանց կամ ծակոտկեն վահանակներ՝ բացվածքները պաշտպանելու համար՝ առանց օդի հոսքը խոչընդոտելու:
- Բահեր, հատակի խոզանակներ և ձեռնասայլակներ՝ կեղտը և բեկորները հեռացնելու համար: Հնարավորության դեպքում ընտրեք պլաստմասսե թիակներ ու հատակի խոզանակներ. դրանք ավելի քիչ վնաս են պատճառում, քան մետաղականները:
- Պոմպեր կամ դոյլեր՝ ավելորդ ջուրը հեռացնելու համար:
- Պլաստիկ խոզանակներ և բարակ շիթով մաքուր ջուր՝ մակերեսներից ցեխի նստվածքը և կեղտի շերտը լվանալու համար:
- Խոնավության չափիչ կամ մուլտիմետր՝ պատերի խոնավությունը չափելու համար:
- Մեխանիկական օդափոխիչներ՝ չորացման գործընթացն արագացնելու համար:
- Հնարավոր է օգտագործել տաքացուցիչներ, բայց երբեք մի օգտագործեք գազի տաքացուցիչներ, քանի որ դրանք ջրի գոլորշի են արձակում: Հիշեք, որ 18°C-ից բարձր ջերմաստիճանը կարող է նաև նպաստել բորբոսի աճին:
- Սառեցնող և խոնավությունը կլանող չորացուցիչները, որոնց աշխատանքը կարելի է կարգավորել խոնավացուցչի միջոցով, ապահովում են չորացման մեղմ պայմաններ: Խուսափեք հին շենքերում ագրեսիվ չորանոցների օգտագործումից:
- Բրեզենտը կարող է օգնել վերահսկել նախշազարդ մակերեսի չորացման գործընթացը: Կանխեք նախշազարդ մակերեսի հետ անմիջական շփումը՝ օգտագործելով փափուկ մուսլինե գործվածք կամ սպիտակ սավան:

Պարզ հենարաններ կառուցելու համար անհրաժեշտ նյութեր և գործիքներ

- Մուրճեր, սղոցներ, պտուտակներ, փայտի սայրեր և հեղույսներ/գամեր:
- Չափիչ ժապավեններ, կապարալարեր և հարթաչափ:
- Լավ որակի փայտե սյուներ և տախտակներ (օրինակ՝ Դուգլասի եղննի կամ Հարավային սոճի):
- Մեխեր. 8D (տրամագիծը՝ 3,5 մմ, երկարությունը՝ 5 սմ) և 16D (տրամագիծը՝ 3,7 մմ, երկարությունը՝ 8 սմ):
- Ստանդարտ մետաղական դարակաշարեր՝ կարգավորելի բարձրությամբ:
- Ավազի, կաուչուկի կամ փրփուրի պարկեր (օրինակ՝ պոլիէթիլենային փրփուր, որը սովորաբար վաճառվում է որպես «Ethafoam/

Պենտալիթթիլեն» պիտակով)՝ մակերեսները պաշտպանելու կամ պատի հենարանի և պատի միջև շփումը բարելավելու համար:

- Ոչ օսլայված և ոչ սպիտակեցված մուսլին կամ սպիտակ բամբակ՝ մակերեսները քերծվածքներից պաշտպանելու համար:

Կառույցը սահմանափակող գոտիներով կապելու համար անհրաժեշտ նյութեր և գործիքներ

- Սինթետիկ գոտիներ՝ արգելանիվ մեխանիզմով բռնակներով (առնվազն 2մմ հաստությամբ և 50-75մմ լայնությամբ):
- Գոտու և պատի/սյան միջև տեղադրվող պողպատե թիթեղներ՝ ծանրությունը համաչափ բաշխելու համար:
- Փայտե ձողեր (մոտ 3 սմ հաստությամբ)՝ պողպատե թիթեղի և պատի/սյան միջև տեղադրելու համար:
- Ռետին կամ փրփուր (օրինակ՝ պոլիէթիլենային փրփուր, որը սովորաբար վաճառվում է “Ethafoam/Պենտալիթթիլեն” պիտակով) կարող են հետագայում պաշտպանել մակերեսները և բարելավել փայտե ձողի և պատի միջև շփումը:
- Ոչ օսլայված և ոչ սպիտակեցված մուսլին կամ սպիտակ բամբակ՝ նախշազարդ մակերեսները քերծվածքներից պաշտպանելու համար:

Նախշազարդ մակերեսների տեղում պաշտպանության համար անհրաժեշտ պարագաներ և սարքավորումներ

- Բրեզենտ՝ մակերեսները ջրից պաշտպանելու համար:
- Ավազի պարկեր՝ նախշազարդ մակերեսները ծածկելու և դրանք հարվածներից պաշտպանելու համար (համոզվեք, որ ավազի պարկերը խոնավություն չեն պահում):
- Ռետին կամ փրփուր (օրինակ՝ պոլիէթիլենային փրփուր, որը սովորաբար վաճառվում է “Ethafoam/Պենտալիթթիլեն” պիտակով)՝ պաշտպանվող մակերեսի և փայտե/պողպատե հենարանների միջև շփումը բարելավելու համար:
- Ոչ օսլայված և ոչ սպիտակեցված մուսլին կամ սպիտակ բամբակ՝ նախշազարդ մակերեսները քերծվածքներից պաշտպանելու համար:
- Փայտե կամ պողպատե թիթեղներ՝ ծանրությունը բաշխելու համար, եթե անհրաժեշտ է ամրացնել որևէ նախշազարդ մակերես (հատակ, առաստաղ, պատ, սյուներ և այլն)






Փայտե սյուներ




Խոնավության
չափման սարք



Բարձրության
հենաձողեր



CGI/CGS թիթեղներ




Մետաղական
ցանց (մանր)



Մետաղական
ցանց (խոշոր)



Փայտե սեպեր



Ցցիկներ և
հենակներ



Ուրագ և բահ



Հարթաչափ



Մետաղական
ժապավեն



Սինթետիկ գոտի-
ներ՝ արգելանիվ
մեխանիզմով
բռնակներով



Կապարալար



Փայտե
տախտակներ



ՀՂՈՒՄՆԵՐ

Քայլ 2. Պատահարի վայրում վնասի և ռիսկերի գնահատում

BC Housing. 2018. *Rapid Damage Assessment*. Burnaby, BC Housing. Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.bchousing.org/about/rapid-damage-assessment> [Դիտման ամսաթիվը՝ 18 փետրվարի, 2018թ]:

Մշտական հղում՝ <https://perma.cc/686P-5JFE>

Connecticut Technology Transfer Center. 2010. *Protective Equipment for Workers in Hurricane Flood Response*. Connecticut, School of Engineering, University of Connecticut.

Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.t2center.uconn.edu/pdfs/SAFETY%20BRIEF%202010-7.pdf> [Դիտման ամսաթիվը՝ 9 փետրվարի, 2018]:

Մշտական հղում՝ <https://perma.cc/LG2T-FTDZ>

Heritage Collections Council. 1998e. *reCollections: Caring for Collections Across Australia – Managing People*. Canberra, Heritage Collections Council.

Հասանելի է հետևյալ հղումով՝ https://aiccm.org.au/sites/default/files/docs/reCollections/5_managing_people.pdf [Դիտման ամսաթիվ՝ 18 փետրվարի, 2018]:

Մշտական հղում՝ <https://perma.cc/RR45-BJDW>

Քայլ 3. Անվտանգություն և կայունացում

Australian Institute for the Conservation of Cultural Material. 2017. *Visual Glossary*. Canberra, Australian Institute for the Conservation of Cultural Material.

Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://aiccm.org.au/conservation/visual-glossary> [Դիտման ամսաթիվ՝ 22 փետրվարի, 2018]:

Մշտական հղում՝ <https://perma.cc/4P8N-5GBP>

Australia International Council on Monuments and Sites (ICOMOS). 2013. *The Burra Charter: The Australia ICOMOS Charter for Places of Cultural Significance, 2013*. Burwood, ICOMOS.

Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://australia.icomos.org/wp-content/uploads/The-Burra-Charter-2013-Adopted-31.10.2013.pdf> [Դիտման ամսաթիվ՝ 21 հունիսի, 2017]:

Մշտական հղում՝ <https://perma.cc/ULL9-UY9U>

Australian War Memorial. n.d. *Conservation advice: Cleaning Soot Damaged Objects*. Canberra, The Australian War Memorial.
Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.awm.gov.au/about/our-work/projects/soot> [Դիտման ամսաթիվ՝ 18 փետրվարի, 2018]:

Մշտական հղում՝ <https://perma.cc/Q38H-G6KT>

Canadian Conservation Institute. 2007. Vacuum Freeze-drying Archaeological Artifacts. *Canadian Conservation Institute (CCI) Notes 4/2*. Ottawa, Minister of Public Works and Government Canada.
Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.canada.ca/en/conservation-institute/services/conservation-preservation-publications/canadian-conservation-institute-notes/vacuum-freeze-drying-archaeological-artifacts.html> [Դիտման ամսաթիվ՝ 12 հոկտեմբերի 2017]:

Մշտական հղում՝ <https://perma.cc/QRP8-LYKA>

Canadian Conservation Institute. 2017. *Agents of Deterioration*. Ottawa, Minister of Public Works and Government Canada, Ottawa.
Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.canada.ca/en/conservation-institute/services/agents-deterioration.html> [Դիտման ամսաթիվ՝ 22 փետրվարի, 2018].

Մշտական հղում՝ <https://perma.cc/S65F-KNA5>

Canadian Conservation Institute. 2017. *Care of Objects and Collections*. Ottawa, Minister of Public Works and Government.
Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.canada.ca/en/conservation-institute/services/care-objects.html> [Դիտման ամսաթիվ՝ 22 փետրվարի 2018]:

Մշտական հղում՝ <https://perma.cc/ZDG8-Y4UU>

Corpo Nazionale dei Vigili del Fuoco – Università degli Studi di Udine. 2011. *Manuale Opere Provvisionali, l'intervento tecnico urgente in emergenza sismica*. Rome, Ministero dell'Interno.
Հասանելի է (իտալերեն) հետևյալ հղումով՝ <http://www.vigilfuoco.it/allegati/STOP/ManualeSTOP.pdf> [Դիտման ամսաթիվ՝ 24 հոկտեմբերի, 2017]:

Մշտական հղում՝ <https://perma.cc/AP8A-22L2>

Department of Homeland Security Federal Emergency Management Agency (FEMA). 2009. *FEMA National US&R Response System Structural Collapse Technician Module 2a Shoring Basics*. Washington, DC, FEMA.

Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.fema.gov/pdf/emergency/usr/module2a.pdf> [Դիտման ամսաթիվ՝ 29

Ապրիլի, 2018]:

Մշտական հղում՝ <https://perma.cc/WF28-Q5QU>

Department of Homeland Security Federal Emergency Management Agency (FEMA). 2018. *Reclaiming Precious Heirlooms From Flood Waters*. Washington, DC, U.S. Department of Homeland Security.

Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.fema.gov/news-release/2003/09/23/reclaiming-precious-heirlooms-flood-waters>

[Դիտման ամսաթիվ՝ 18 փետրվարի, 2018]:

Մշտական հղում՝ <https://perma.cc/XY64-GPM6>

Department of Homeland Security Science and Technology Directorate, Infrastructure Protection and Disaster Management Division. 2011. *Field guide for Building Stabilization and Shoring Techniques*. Washington, DC, U.S. Department of Homeland Security.

Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.dhs.gov/xlibrary/assets/st/st-120108-final-shoring-guidebook.pdf>

[Դիտման ամսաթիվ՝ 24 հոկտեմբերի 2017]:

Մշտական հղում՝ <https://perma.cc/ZN3R-NRWU>

Grimaz, S., Cavriai, M., Mannino, E., Munaro, L., Bellizzi, M., Bolognese, C., Caciolai, M., D'Odorico, A., Maiolo, A., Ponticelli, L., Barazza, F., Malisan, P. & Moretti, A. 2010. *Vademecum, STOP, Shoring Templates and Operating Procedures for the Support of Buildings damaged by Earthquakes*. Rome, Ministry of Interior – Italian Fire Service.

Հասանելի է հետևյալ հղումով՝ http://sprint.uniud.it/sites/default/files/Vademecum_STOP_eng_0.pdf

[Դիտման ամսաթիվ՝ 24 հոկտեմբերի, 2017]:

Մշտական հղում՝ <https://perma.cc/62JX-UGLP>

Heritage Collections Council. 1998a. *reCollections: Caring for Collections Across Australia – Caring for Cultural Material 1*. Canberra, Heritage Collections Council.

Հասանելի է հետևյալ հղումով՝ https://aiccm.org.au/sites/default/files/docs/reCollections/1_caring_for_cultural_material_1.pdf
[Դիտման ամսաթիվ՝ 18 փետրվարի, 2018]:

Մշտական հղում՝ <https://perma.cc/9DS2-DRPA>

Heritage Collections Council. 1998b. *reCollections: Caring for Collections Across Australia – Caring for Cultural Material 2*. Canberra, Heritage Collections Council. Հասանելի է հետևյալ հղումով՝ https://aiccm.org.au/sites/default/files/docs/reCollections/2_caring_for_cultural_material_2.pdf [Դիտման ամսաթիվ՝ 18 փետրվարի, 2018]:

Մշտական հղում՝ <https://perma.cc/49CQ-QVUV>

Heritage Collections Council. 1998d. *reCollections: Caring for Collections Across Australia – Managing Collections*. Canberra, Heritage Collections Council. Հասանելի է հետևյալ հղումով՝ https://aiccm.org.au/sites/default/files/docs/reCollections/4_managing_collections.pdf
[Դիտման ամսաթիվ՝ 18 փետրվարի, 2018]:

Մշտական հղում՝ <https://perma.cc/5NAY-J562>

Heritage Collections Council. 1998f. *reCollections, Caring for Collections Across Australia – Handling, Transportation, Storage and Display*. Canberra, Heritage Collections Council. Հասանելի է հետևյալ հղումով՝ https://aiccm.org.au/sites/default/files/docs/reCollections/6_htsd.pdf
[Դիտման ամսաթիվ՝ 18 փետրվարի, 2018]:

Մշտական հղում՝ <https://perma.cc/5XRJ-U9R3>

100 First Aid to Cultural Heritage in Times of Crisis | 2. Toolkit

Historic England. 2015. *Flooding and Historic Buildings*. Swindon, Historic England. Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://content.historicengland.org.uk/images-books/publications/flooding-and-historic-buildings-2ednrev/heag017-flooding-and-historic-buildings.pdf>
[Դիտման ամսաթիվ՝ 18 փետրվարի, 2018]:

Մշտական հղում՝ <https://perma.cc/M66M-3E8L>

International Federation of Red Cross and Red Crescent Societies. n.d. *The IFRC Shelter Kit*. Geneva, International Federation of Red Cross and Red Crescent Societies. Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.ifrc.org/PageFiles/95526/publications/D.03.a.07.%20IFRC%20shelter-kit-guidelines-EN-LR.pdf> [Դիտման ամսաթիվ՝ 18 փետրվարի, 2018]:

Մշտական հղում՝ <https://perma.cc/R5Y5Z-DEU3>

International Federation of Red Cross and Red Crescent Societies. 2015. *IFRC bamboo frame for emergency shelters and emergency roofs – Technical sheets*. Geneva, International Federation of Red Cross and Red Crescent Societies.

Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.ifrc.org/Global/Documents/Secretariat/Shelter/IFRC-bamboo-frame-A4-FINAL-EN-2015.pdf> [Դիտման ամսաթիվ՝ 18 փետրվարի, 2018]:

Մշտական հղում՝ <https://perma.cc/S7YY-78MG>

Levitan, A. 1993. Emergency Treatment for Water-Soaked Furniture and Wooden Objects. *National Parks Service Conserve O Gram*, 7(7). Washington, DC, U.S. Department of the Interior.

Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.nps.gov/museum/publications/conserveogram/07-07.pdf> [Դիտման ամսաթիվ՝ 18 փետրվարի, 2018]:

Մշտական հղում՝ <https://perma.cc/4J9T-SFVZ>

McCord, M., & Stone, T. 2002. Deterioration of Collections. *Generation 2: Education and Support Materials*. ICCROM unpublished material. Rome.

Russell, R. & Winkworth, K. 2009. *Significance 2.0: A guide to assessing the significance of collections*. Canberra, Collections Council of Australia Ltd.

Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arts.gov.au/sites/g/files/net1761/f/significance-2.0.pdf> [Դիտման ամսաթիվ՝ 18 փետրվարի, 2018]:

Մշտական հղում՝ <https://perma.cc/GJ8G-ERAN>

State Library of Queensland. 2014a. *Caring for your collections: Salvaging water-damaged collections*. Brisbane, Queensland Government.

Հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.slq.qld.gov.au/data/assets/pdf_file/0005/128984/Caring-for-your-collections-Salvaging-water-damaged-collections.pdf

[Դիտման ամսաթիվ՝ 18 փետրվարի, 2018]:

Մշտական հղում՝ <https://perma.cc/8V9X-YFNS>

State Library of Queensland. 2014b. *Caring for your collections: Freezing water-damaged and insect infested collections*. Brisbane, Queensland Government.

Հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.slq.qld.gov.au/_data/assets/pdf_file/0004/128983/Caring-for-your-collections-Freezing-water-damaged-and-insect-infested-collections.pdf

[Դիտման ամսաթիվ՝ 18 փետրվարի 2018]:

Մշտական հղում՝ <https://perma.cc/V6KB-XKZL>

Tandon, A. 2016. *Endangered Heritage: Emergency Evacuation of Heritage Collections*. Paris, UNESCO & Rome, ICCROM.

Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.iccrom.org/wp-content/uploads/Endangered-Heritage_INTERACTIVE.pdf

[Դիտման ամսաթիվ՝ 14 փետրվարի, 2018]:

Մշտական հղում՝ <https://perma.cc/7J4C-TJDK>

United States Army Corps of Engineers. 2013. *Urban Search & Rescue Shoring Operations Guide*. Washington, DC, United States Department of Defence.

Հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.disasterengineer.org/LinkClick.aspx?fileticket=_qYQCrKHi2k%3D&tabid=57&mid=394 [Դիտման ամսաթիվ՝ 14 հուլիսի, 2018]:

Մշտական հղում՝ <https://perma.cc/H6NA-WBRY>

Van Balen, K. 2008. The Nara Grid: An evaluation Scheme Based on the Nara Document on Authenticity. *APT Bulletin*, 39(2/3): 39–45.

Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://orcp.hustoj.com/wp-content/uploads/2016/01/2008-The-Nara-Grid-An-Evaluation-Scheme-Based-on-the-Nara-Document-on-Authenticity.pdf>

[Դիտման ամսաթիվ՝ 17 հունվարի, 2018]:

Մշտական հղում՝ <https://perma.cc/DL8A-E32V>

#culturecannotwait



Via di San Michele 13
00153 Rome, Italy
+3906585531
www.iccrom.org

Herengracht 474, 1017 CA
Amsterdam, The Netherlands
www.culturalemergency.org

Kingsfordweg 151
1043 GR Amsterdam
The Netherlands
+31203449160
www.princeclausfund.nl

ԻԿՕՄ Հայաստան
Արամի 1, 0010 Երևան
<https://icom-armenia.mini.icom.museum/>
+37493446799

© ICCROM, Prince Claus Fund for Culture and Development, Cultural Emergency Response, ICOM Armenia, Association of Museum Workers and Friends, 2024

ISBN 978-9939-895-43-7



9 789939 895437

